№ 34 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16 | 1906 | ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16 № 34

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1906 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։ Փետրվարի 1-ից մինչև 1 յունիսի 3 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Կիրակի, փետրվարի 19-ին, առաւօտեան ժամը 11-ին, քաղաքային Դումայի դահլիճում կայանալու է

Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերութեան
ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Քննվելու են հետևեալ հարցերը։
1) Ընկերութեան հին կանոնադրութեան վերահաստատումը։
2) Վարչութեան անդամների թւի աւելացումը։
3) Ընկերութեան անշարժ կալքերի շահագործումը։ (հ.կ.) 2—2

ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ԵՒ ՉՈՒԳՈՒՆԻ ՁՈՒԼԱՐԱՆ
Ի. Ս. ԲՈՒԿՍԻ

Այս տարվայ փետրվարի 1-ից վերանորոգեց իր գործողութիւնը։ Գործարանի պահեստում կան չուգունի ձուլվածքներ, ջրմուղի ֆասօնական մասը և զանազան ջրաղացի պատկանելիութիւն։ Պատուէրներով խնդրում եմ դիմել՝ Тифлисъ, Великокняжеская ул. д. № 49, հեռախօս № 556։
3—4 (հ.կ.) Կառավարող՝ Ա. Դ. Խորին

ՄԱՆԹԱՇԵԱՆԻ ԿԱՐԳԵՐ
ԲԱԶԱԶԽԱՆԻ ՄՕՏ
(Манташевскіе ряды)
ԵՐԿԱԹԱՎԱՃԱՌԻ ԽԱՆՈՒԹ
Դաւիթ Եսայեան Առաքելեանցի

Յայտարարում եմ ի գիտութիւն յարգելի ժողովրդին և իմ պ. պ. կլիենտներին՝ թէ Թիֆլիսի և թէ օտար քաղաքների, որ իմ խանութները, որոնք կային թէ Թուրքերի Մայդանում և թէ Սալդատսկի բազարում, ես անցեալ տարվայ նոյեմբերի 22-ից փոխադրել եմ մի նոր տեղ, մի ընդարձակ խանութ Բազազխանի մօտ, Մանթաշեանցի նոր շինութեան մէջ, և դրա համար էլ յայտարարում եմ, որ այն բաց հաշիւները, որոնք վերաբերում են իմ վերոյիշեալ դադարեցրած խանութներին, պէտք է մաքրվեն իմ նոր խանութում։ Յուսով եմ, որ բոլոր իմ կլիենտները չեն թողնի իմ նոր խանութը առանց ուշադրութեան։
7—10 (հ. կ.) Յարգանօք՝ Դ. Ե. Առաքելեանց

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
«ՄՈՒՐՃ» ամսագրի յունվարի համարը

Շարունակվում է 1906 թ. բաժանորդագրութիւնը. տարեկան 10 րուբլի (արտասահմանի համար 12 ր.), ուսուցիչների և ուսանողների համար 8 րուբլի։ Բաժանորդագինը կարելի է վճարել և մաս-մաս։ Նոր բաժանորդները ձրիաբար ստանում են 1905 թ. № 11—12 «Մուրճ»-ը։ Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, редакцію «Мурчъ».
2—3

Գ. ԵՍ. ԱՒՍԱՐԿԻՍՕՎԻ
ԱՅԳՈՒ ԾԱՌԵՐԻ
ՏՆԿԱՐԱՆ

Ծախվում են պատուաստ ծառեր արտասահմանեան, ռուսական և կովկասեան տեսակների։ Հասցէն՝ ст. Скра Зак. Жел. Дор. Авсаркисову. Ցուցակը ուղարկվում է ձրիաբար։
2—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ պատասխան էք տալիս. Վերջին տեղեկութիւններ. Դէպքերը Վրաստանում. Մամուլ. Թիֆլիսի գեներալ-նահանգապետի կարգադրութիւնը. Սենատոր Կուզմինսկու տեղեկագրից. Քաղաքայի խորհրդի նիստը. Միխայլօվսկու արձանի բացումը. Նամակ Գանձակից. Նամակ Նոր-Բայազէտից. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլօ հայկական հանդէսը Լօնդոնում. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Ի՞ՆՉ ՊԱՏԱՍԽԱՆ ԷՔ ՏԱԼԻՍ

I

Մի՞թէ մեր հասարակութիւնը խուլ և անտարբեր է դէպի այն յուզմունքները, որոնք տեղի ունեն Էջմիածնի ճեմարանի և Երևանի թեմական դպրոցի մէջ։

Ոչ։ Խուլ և անտարբեր չէ։

Այն տեղեկութիւնները, որոնք լոյս տեսան մամուլի էջերում, մեծ կսկիծ պատճառեցին հասարակութեան։ Նրանք վերաբերում էին մեր այն ցաւերին, մեր ներքին պակասութիւնների այն շարքին, որոնց մասին տարիներ շարունակ տեղի են ունեցել պայքարներ և սուր մաքառումներ։

Եւ անկասկած՝ հասարակութիւնը կը զբաղվէր և մի առանձին ուշադրութեամբ կը զբաղվէր այն հարցերով, որոնք հանդէս են եկել Էջմիածնում և Երևանում։ Բայց նա չէ զբաղվում և կարծես վախենում է զբաղվել այդ հարցերով։

Ինչո՞ւ։

Երկու պատճառով։ Առաջինը, մեր հասարակութիւնը ներկայումս տարուբերվում է հայ-Թուրքական ընդհարումների վտանգաւոր ծփանքների մէջ և երկրորդ, նա գիտէ, որ մեր դպրոցական ներկայ յուզմունքները միայն ծայրն են մի մեծ կծիկի, որ չափազանց երկար թելերով է պատած և նա կարծեք չէ ուզում այդ ծայրը առ այժմ բանալ։

Մենք այսօր չենք խորասուզվի դպրոցական մեր կարգերի քննադատութեան և առհասարակ դպրոցական բարեկարգութեան հարցերի մէջ։ Մենք կանգ կառնենք այն գլխաւոր պահանջների վրա, որ անում է դպրոցական մեր մատաղ սերունդը։

Վերցնենք օրինակի համար այն պահանջները, որ արել են Երևանի թեմական դպրոցի աշակերտները։

II

Առաջին նրանց պահանջը հետևեալն է.

«Աշխարհաբարը պէտք է տիրող լինի դպրոցում»։

Կարդալով այս պահանջը՝ մեր ընթերցողը կը բացականչէ.

—Դա երևի չարամիտ մի զրպարտութիւն է մեր դպրոցների վրա։ Մի՞թէ աշխարհաբարը չէ տիրողը և գերիշխողը Երևանի թեմական դպրոցում, կամ Էջմիածնի ճեմարանում։

Աշակերտութեան այդ պահանջը կարող էր փոքր ի շատէ յանդուգն և օտարոտի թւալ անցեալ տասնիններորդ դարի յիսունական թւականներում, երբ աշխարհաբարը կռիւ էր մղում իր գոյութեան համար։ Իսկ այժմ, երբ մենք ստեղծել ենք աշխարհաբարի ամբողջ մի գրականութիւն, մի՞թէ թեմական դպրոցը այնպէս վատ է դրել աշխարհաբարի ուսուցումը, որ դեռ պէտք է զգացվում ջատագովել նրա առաջնակարգ և գերիշխող նշանակութիւնը։

Դա աւելի քան օտարոտի է։

Ճիշտ է, մենք շատ անգամ տեսել ենք, որ մեր թեմականները կարգին աշխարհաբար գրել չը գիտեն, բայց ենթադրել ենք, թէ դրանք բացառութիւններ են եղել և պատահական երևոյթներ, իսկ այժմ պարզվում է բանի էութիւնը։

Եւ մի՞թէ պէտք էր սպասել, որ աշակերտութիւնը, ինքը՝ իր մատը դնէր վէրքի վրա և նրան բանար մեր հասարակութեան առաջ։

Եւ ինչ կարող է մեր դպրոցական վարչութիւնը առել այդ արդարացի պահանջի դէմ։

Ի հարկէ ոչինչ։

Աշակերտների երկրորդ պահանջն այն է, որ ռուսերէնի դասաւանդութիւնը դրվի կանոնաւոր հիմքերի վրա, աւելացվի դասերի թիւը և դէն ձգվի Իլովայսկու դասագիրքը։

Աշակերտները զգում են, որ նրանց համար անհրաժեշտ է ռուսերէնի աւելի լաւ իւրացումը և միևնոյն ժամանակ նրանք զզվում են մի ձեռնարկից, որ իսկապէս վատ ձեռնարկ է,

Ուրեմն ինչ անպատեհութիւն կայ այդ պահանջի մէջ։ Մի՞թէ այդպիսի օրինաւոր պահանջը կարող է չը յարգվել։

III

Այնուհետև աշակերտները պահանջում են, որ աւելի խելացի կերպով դասաւանդվեն Հին Ուխտի և եկեղեցական պատմութիւնը, իսկ կարգ աստուածպաշտութեան և տօմարագիտութեան ուսուցումը բոլորովին վերացվի։

Այստեղ ճիշտ է կան վիճելի և պայմանաւոր կէտեր, թէ ինչպէս պէտք է ողմել Հին-Ուխտի պատմութիւնը, կամ եկեղեցական պատմութիւնը ընդհանուր պատմութեան մէջ. բայց մի բան կասկածից դուրս է, որ ներկայ դասաւանդութիւնը բոլորովին անբաւարար է։ Ուստի այդ առարկաների ուսուցման հարցը պէտք էր համարել վերաքննութեան կարօտ և անմիջապէս ձեռնարկել նոր ծրագրի մշակութեան։

Իսկ ինչ վերաբերում է տօմարագիտութեան նման մի առարկային, մենք զարմանում ենք, որ նա առարկայ է համարվում թեմական դպրոցներում։ Տօմարագիտութեան վերաբերեալ տեղեկութիւնները կարելի էր հաղորդել ամենահամառօտ կերպով դասերից ազատ մի քանի ժամվայ ընթացքում։

Աշակերտների պահանջների թւումն է և այն, որ անգիր անելու չը տրվեն արձակ գրուածքներ և քերականական անկապ վարժութիւններ։

Ի հարկէ։

Մի՞թէ դա ինքնըստ ինքեան հասկանալի չէ եղել մինչև այժմ։

Աշակերտները պահանջում են, որ քննութիւնները վերացվեն, որ աշակերտների առաջադիմութիւնները թւանշաններով չը գնահատվեն և վկայականների մէջ որակի տարբերութիւններ չը դրվեն։

Ինչպէս յայտնի է, այդ տեսակ փոփոխութիւններ տեղի ունեցել են արդէն ուրիշ երկիրներում, բայց և այնպէս կան վիճելի կէտեր, որոնք կարող են յատուկ քննութեան ենթարկվել։

Այդպէս էլ պէտք էր ձևակերպել։

IV

Այնուհետև գալիս են մի քանի պահանջներ, որոնք վերաբերում են աշակերտական կազմի յարաբերութիւններին։

Աշակերտները ցանկութիւն են յայտնում, որ ուսուցիչների և վերակացուների վերաբերմունքը լինի քաղաքավարի։

Դա արդարացի մի ցանկութիւն է, որի մէջ անյարմար ոչ մի կէտ չը կայ։ Այն ուսուցիչներին, որոնք քաղաքավարի են եղել, անկասկած նրանց չի դիպչել այդ նկատողութիւնը, իսկ նա ով թոյլ է տալիս իրան անքաղաքավարութիւն, կը զգաստանայ։

Աշակերտները ցանկանում են ընկերական դատ հաստատել—դա մի անմեղ ցանկութիւն է, որ կարելի էր գործադրել. իսկ յետոյ կեանքի փորձը ցոյց կը տար թէ դա որքան առողջ մի հաստատութիւն է մեր դպրոցական շրջանում։

Աշակերտների պահանջներից մէկն էլ այն է, որ աշակերտների ներկայացուցիչը մասնակցէ մանկավարժական խորհրդում։ Ահա այդ կէտը, կարծում ենք, միակն է, որ անյարմար է իսկապէս։ Երբեմնակի, որոշ դէպքերում, անշուշտ օգտաւէտ և նպատակայարմար կը լինէր լսել և խորհրդակցել աշակերտների հետ, բայց մշտական ներկայացուցիչ ունենալ մանկավարժական խորհրդում, դա ունի իր ուրիշ անյարմարութիւնները։

Վերջապէս՝ աշակերտները ցանկանում են շաբաթական մի օր գրական երեկոյթներ ունենալ մասնագէտ ուսուցիչների ղեկավարութեամբ և դասախօսութեամբ։

Դա մի ցանկութիւն է, որ կարելի էր միայն ողջունել և խրախուսել։

Այդ ցանկութիւնը վաղուց պէտք է իրագործած լինէին ինքնաբերաբար իրանք ուսուցիչները և հոգաբարձութիւնները և նրանք սպասել են, մինչև որ նրանց այդ մասին յիշեցրել են աշակերտները։

V

Այսպէս են աշակերտական պահանջները։

Դրանք դրական առաջարկութիւններ են, որոնք կատարելապէս արժանի էին լուրջ ուշադրութեան և քննութեան։

Աշակերտները աղաղակում են, որ նրանք սովորել, ուսանել են ցանկանում, որ նրանք կամենում են գիտակցաբար վերաբերվել իրանց սովորածին, լաւ ուսումնասիրել աշխարհաբար լեզուն, զարգանալ գրական երեկոյթների օգնութեամբ և բարձրացնել աշակերտների անհատական պատուազգացութիւնը։

Մենք լաւ գիտենք, որ այստեղ նախաձեռնութեան կամ ինիցիատիվի մի անախորժ հարց կայ, թէ ինչու դպրոցական բարեփոխութիւնների նախաձեռնութիւնը ծագել է ոչ թէ ուսուցչական և հոգաբարձական մարմիններից, այլ աշակերտներից։

Սակայն ո՞վ է մեղաւորը. ուսուցիչները և հոգաբարձուները ուշացել են կամ զանցառու են գտնվել և դպրոցական պահանջները աշակերտների շրջանից են ասպարէզ նետվել։

Այստեղ միայն մի ելք կայ, միայն մի ճանապարհ՝ գործին օգնելու—գնալ խելացի պահանջներին ընդ առաջ և ուշի ուշով վերաբերվել դպրոցական միւս կարիքների ուսումնասիրութեան, որպէս զի նորից կեանքը չը խլէ այդ նախաձեռնութիւնը դպրոցական ղեկավարների ձեռքից։

Հասարակութիւնը սպասում է, որ դպրոցական ղեկավարները ձեռնարկեն խելացի միջոցների և մեր ուսանող սերունդը դնեն կրթութեան այնպիսի պայմանների մէջ, որ բաւարարութիւն ստացած լինեն ուսման և դաստիարակութեան էական պահանջները։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշուց մի պատգամաւորութիւն գնացել էր Գանձակ բացատրելու գեներալ-նահանգապետ Ալֆտանին բժիշկ Բահաթրեանի և Մելիք-Շահնազարեանի անմեղութիւնը և խնդրելու, որ փոխվի նրանց Օրէնբուրգ ուղարկելու կարգադրութիւնը։

Գեներալ-նահանգապետը լսեց բացատրութիւնը, արաւ մանրամասն հարց ու փորձ և համաձայնեց, որ բժիշկ Բահաթրեանը և Մելիք-Շահնազարեանցը գան Գանձակ անձամբ զեկուցանելու և ներկայացնելու իրանց բացատրութիւնները։

Պատգամաւորները՝ հեռագրեցին Շուշի իրանց ստացած պատասխանը։

—

Կըրզան գիւղի գերիների մնացորդը, որ տառապում էր Թուրքական Բօզալղանլու, Մանսուրլու և Խաթունլու գիւղերում, վերջապէս ազատվեցին և երկաթուղիով ճանապարհվեցին Թիֆլիս։ Ահա երեք օր է, որ նրանք գտնվում են մեր քաղաքում։

—

Այսօր փետրվարի 11-ին, երեկոյեան ժամը 5-ին, Դիլիժանի, Քարվանսարայի և Աչաջրի գիւղական հայ հասարակութիւններից հաւաքած զէնքերով, դրանց համար նշանակված հաւատարմատարներով, նորակոչ զինուորներով, բոլոր տանուտէրներով հասանք Ղազախ։ Զէնքերը յանձնեցինք. կոտրեցին. բայց լաւերը ջոկում էին։ Նորակոչները գիշերս կը մնան զօրանոցում. հեռագրով կարգադրեցին նրանց համար վագոններ։ Նրանք առաւօտ կը գնան Աղստաֆի կայարանը և կուղևորվեն Գանձակ վոյինսկիյ նաչալնիկին ներկայանալու։ Տանուտէրներին պ. Լեվիցկին զանազան խրատներ տուեց ժողովրդին խաղաղացնելու նպատակով. դրա համար էլ յատկապէս հրաւիրել էր տանուտէրներին 2-ական ներկայացուցիչներով։ Լեվիցկու ձեռք առած կտրուկ միջոցների շնորհիւ հանգստութիւն է տիրում (գոնէ ըստ երևոյթին այդպէս է)։ Նա մեզ հաւատացնում է, որ առանց զինուորների ազատ կարող ենք ման գալ, ուր ուզում ենք գնալ ու մեզ ոչինչ չի լինի, բայց և այնպէս մենք խնդրեցինք, որ առաւօտը մեզ առանց պահակի ճանապարհ չը գցեն։ Թուրքերը կոտրված են երևում. Նրանցից ոմանք անկեղծ ուրախութեամբ ողջագուրվում են մեզ հետ, ոմանք էլ խեթ խեթ նայելով, արտի նախանձը աչքերով արտայայտելով հեռանում են մեզանից. Սպասենք հետևանքին...

Ստ. Դաւթեան

—

Շուլավէր, 14 փետրվարի

Ամսիս 13-ին, երեկոյեան, մօտաւորապէս ժամը 8-ին, այստեղ տեղի ունեցաւ մի ցաւալի և ոչ ցանկալի դէպք—այն է, վիրաւորվեց մի Թուրք։

Ինչպէս ինձ տեղեկացրին, դէպքը պատահում է այսպէս։

Երկու Թուրք գալիս են մի շուլավէրցու մօտ, իբրև ծանօթ մարդու, որպէս զի գիշերը նրա տանը անցկացնեն։ Տանտէրը, Թովման, ճրագը վառած, դուրս է գալիս տանից և գնում է գոմը, (թողնելով Թուրքերին դուրս) որպէս զի նրանց քնելու տեղ պատրաստէ, որովհետև իր միակ սենեակում իր ընտանիքն է լինում պառկած։

Այդ րօպէին երբ Թուրքերը դուրսը սպասում էին, դուրս է գալիս հարևան տնից մի ուրիշ մարդ և տեսնելով այդտեղ կանգնած մարդկանց, հարցնում է. ո՞վքեր էք, հայերէն և Թուրքերէն, մի քանի անգամ։ Թուրքերը տեսնելով, որ այդ մարդը մօտենում է և ուզում է տեսնել ովքեր են, յայտնի չէ ինչից դրդված՝ սկսում են փախչել դաշոյնները հանած, իսկ այս մարդը հրացանը ձեռին վազում է ետևներից։ Ճանապարհին ոչ ոք չէ կարողանում բռնել դրանց, որովհետև դրանք պաշտպանվում էին դաշոյններով և թոյլ չէին տալիս ոչ ոքի մօտենալ իրանց։ Այս բանից զայրացած՝ ետևներից վազող մարդը կրակում է հրացանը և հէնց առաջին գնդակից վիրաւորվում է Թուրքերից մէկը։ Վիրաւորը ընկնում է, իսկ միւսը փախչում է. իսկոյն հաւաքվում են ահագին ամբոխ և տեղական պօլիցիան. վիրաւորին տանում են, իսկ հետևեալ օրը ձերբակալում են թէ միւս Թուրքին և թէ հային և յանձնում տեղական ադմինիստրացիային։

Այս ցաւալի դէպքը, ինչպէս ասած, շատ վատ է ազդել տեղական մարդկանց վրա, և բոլորն էլ դժգոհ են, որ այդպիսի բաներ են տեղի ունենում երկու հարևան ժողովրդի մէջ. սակայն չը գիտեն թէ ո՞վ է պատճառը և ինչպէս անեն, որ վերջ դրվի այս տեսակ անախորժ դէպքերին։

Ուս. Ալ. Բաղդասարեանց

—

Պետերբուրգ։ «Новости» թերթը հաղորդում է, որ զինուորական մինիստր գեներալ Ռեդիգերի պաշտօնաթողութեան մասին եղած լուրերը կապ ունեն Ֆինլանդիայի դրութեան մասին նրա արտայայտած կարծիքների հետ։ Գեներալը անհրաժեշտ էր համարում, որքան որ ռուսական շահերի տեսակէտից թոյլատրելի են, ֆինլանդացիների ցանկութեանը բաւարարութիւն տալ, որովհետև բարեհաճ քաղաքականութիւնը հանգստացուցիչ ներգործութիւն կունենայ Ֆինլանդիայի և Ռուսաստանի վրա և ֆինլանդացիներին ռուսներին անկեղծ բարեկամներ կը դարձնէ, մինչդեռ ռէպրէսսիաները բանը այնտեղը կը հասցնեն, որ անհրաժեշտ կը լինի նորից նուաճել Ֆինլանդիան, որը, աչքի առաջ ունենալով ֆինլանդացիների հայրենասիրութիւնը և տեղական պայմանները, այնքան էլ հեշտ չի լինիլ իրագործել։ Այդպիսի հայեացքների համար նա մի քանի բարձր շրջաններում դժգոհութիւն է յարուցել, և այստեղից էլ առաջացել է թիւրիմացութիւն, որը, երևի, կը ստիպէ գեներալ Ռեդիգերին թողնել իր պաշտօնը։ («Ռ. Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս։ Իշխանութիւնը հայերի տներում գտաւ բաւականաչափ ռումբեր։ Բացվեց մի դաւադրութիւն, որ իբրև թէ ուղղված է սուլթանի դէմ։

(«Ռ. Հ. Գ.»)

—

Եկատերինենֆելդ գաղութից «Нов. Об.»-ին գրում են. Բօրչալուի գաւառում տեղի ունեցած Թուրք-հայկական ընդհարումների ժամանակ փչացած կալուածատէրերը և պանրի գործարանատէրերը տեղական գաւառապետ պ. Բեազանովի միջոցով խնդրամատոյց են եղել Փոխարքային իրանց կրած երկու միլիոնի վնասները փոխարինելու համար։ Գաւառապետը միջնորդում է, որ մի միլիոնը տրվի նրանց պետական գանձարանից, իսկ միւսը վճարէ տեղական Թուրք ազգաբնակութիւնը։ Այժմ մենք իմացանք հաստատ աղբիւրներից, որ ամբողջ Բօրչալուի գաւառը զինուորական դրութեան մէջ է դրվում։ Արդէն Թիֆլիսից Ջալալ-օղլի են եկել երկու վաշտ հետևակ և մէկ ումբաձիգ զօրախմբեր։ Լուր է պտտում, որ զինուորական դրութիւնը մտցնելուց յետոյ, աչքի առաջ ունեն այստեղից գաղթեցնել թալանների ու ջարդերի մէջ մեղաւոր գիւղերը. Մուղանլու, Արխլու, Նազունլու և ուրիշները։

ԴԷՊՔԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Կովկասեան Փոխարքայի ստացած հեռագիրը.

Քութայիս, 12 փետրվարի։ Այսօր, յուզմունքի ազդանշանով Քութայիսի քաղաքապահ զօրքը ժողովվեցի քաղաքի կենտրոնում. հանդիսաւոր քայլուածքով առաջ ընթացին և, համոզվելով որ զօրքը հիանալի դրութեան մէջ է, Ձերդ պայծառափայլութեան անունով շնորհակալութիւն յայտնեցի։

Գեներալ-մայոր Ալիխանով

Թիֆլիսից «Бирж. Вѣд.» լրագրին հեռագրում են. «Այս օրերս կատարված հետախուզութիւններից երևաց, որ յեղափոխականները մի քանի տեղերում գործում են գեղեցիկ կազմակերպված զօրաբաժիններով, որոնց առաջնորդում են գուրիացի և իմերել օֆիցերները։ Այդ զօրաբաժինները զինուորված են լաւագոյն հրացաններով և սովորած են զինուորական արհեստը։ Շօրապանի և Ռաճայի գաւառներում ընդհարումներ են տեղի ունենում։ Զօրքերը դժուարութեամբ են ջարդում յեղափոխականներին և ոչ առանց կորուստների։ Շօրապանի գաւառը ուղարկված են օժանդակ զօրքեր»։

—

Ռաճա-Լեչխումի. Լեչխումում զօրքը հասաւ մինչև Ցագերի։ Թէպէտ ժողովուրդը ամեն տեղ աղ ու հացով էր դիմաւորում և խոստանում էր հնազանդվել նրանց պահանջներին, բայց, այնուամենայնիւ, խառնաշփոթութիւնը անխուսափելի դարձաւ։ Ցագերիում հրդեհեցին մի քանի տներ. այս դէպքից յետոյ զօրքի մի մասը մնաց Ցագերիում, իսկ միւս մասը յետ եկաւ Ռաճա։ Ախալճալա գիւղում այրեցին՝ ազնուական Գրիգոր Դեչօվանի, բժ. Դիմիտրի Ալավիձեանի և Ալեքսի Դեչօվանիի տները. սրանից յետոյ զօրքը գնաց Ճղվիշի գիւղը և այնտեղ այրեց մօտ 10-ը տուն, որոնց թւումն էր նաև Գասպարիա Ցխվեդիանիի տունը։ Ճղվիշի գիւղում ձերբակալել են մի քանի մարդկանց, որոնք ճանաչված են իբրև ագիտատօրներ։

Ճղվիշի գիւղից զօրքը գնաց Ռաճա։ Ցօլա գիւղում թնդանօթով ոչնչացրին 1 տուն։ Խվանճկարա գիւղում այրել են մօտ 47 տուն. մէկ տանը, ինչպէս պատմում են, կապած է եղել մի խելագար, որին արձակել չեն կարողացել. խեղճը այրվել է։ Խվանճկարի գիւղը ոչնչացնելուց յետոյ զօրքը մեկնեց դէպի Օնի։

Լեչխումի կողմը մնացել է առայժմ Սվանեթի գիւղը, ուր ճանապարհները կապված են և զօրքը հնարաւորութիւն չունի ներս խուժել։

Ռաճայում յայտնի չէ թէ ինչ է կատարվել. յայտնի է միայն, որ Նիկօծմինդայի հասարակութեան մի քանի տները այրվեցին։ Նիկօծմինդայում փետրվարի 6-ին եկել էին 200 կօզակ. այս լուրը սարսափ մէջ գցեց բոլորին. սարսափած օրիորդները և երեխաները, գլուխները ազատելու համար, փախչում էին ձիւնապատ անտառ. մօտակայ գիւղերը բոլորովին դատարկվեցին. կօզակները սկսեցին իրանց գործը. նոյն գիշերը խուզարկեցին Սօսօ և Էրմիլէ Կօրախիձէների տները և երկուսն էլ այրեցին։ Խօտեվի գիւղում այրեցին 2 տուն. կօզակների գլխաւորը յայտնեց այնտեղի բնակիչներին, որ եթէ չեն մատնի ճառախօսներին և զէնքը չեն յանձնի, բոլոր բնակիչներին կոչնչացնեն։

ՄԱՄՈՒԼ

Մայրաքաղաքի լրագրներից քաղելով յայտնել էինք, որ Պետերբուրգում գումարված մահմեդականների համառուսական ժողովը որոշել է յարել սահմանադրական-ռամկավարական կուսակցութեան։ Այս լուրը, ինչպէս երևում է, վաղաժամ է։ Ահա ինչ ենք կարդում Պետերբուրգում հրատարակվող «Ուլֆեթ» Թուրք լրագրում.

«Մահմեդականների համաժողովում, ասում են, թէ պիտի խորհրդակցեն և քաղաքական հարցերի մասին։ Ի հարկէ որ պիտի խորհրդակցեն, և ի հարկէ որ մեզանից ոմանք պիտի առաջարկեն առանձին քաղաքական կուսակցութիւնների յարել։ Դուցէ ասեն, որ այդ հարկաւոր է։ Ինչ որ էլ առաջարկեն, մենք յարմար ենք համարում մեր միտքը յայտնել այս մասին։ Այժմ մեզ հարկաւոր չէ մի առանձին կուսակցութեան միանալ։ «Ինչու հարկաւոր չէ, մի՞թէ դուք չէք ցանկանում ազգի առաջադիմութիւնը» ասողներին մենք կը պատասխանենք. «Մենք ցանկանում ենք ազգի առաջադիմութիւնը, և հէնց այդ նպատակով էլ ոչ մի կուսակցութեան չը պէտք է խառնվենք»։—«Եթէ միանալ հարկաւոր լինի, ո՞ր քաղաքական կուսակցութեան պէտք է միանանք»։ Մենք այս հարցերին եթէ պատասխանենք և ասենք որ այս ինչ կուսակցութեան, այս ինչ կօմիտէին պիտի միանանք, այն ժամանակ այդ խօսքերը ասած պիտի լինէինք ամբողջ ազգի անունից։ Եթէ երբեք յետոյ մեր ժողովրդի մեծամասնութիւնը այդ կուսակցութիւնից վնաս տեսնէ, շատ հաւանական է, որ այդ դէպքում մեծ անհանգստութիւններ և դժբաղդութիւններ երևան գան. այն ժամանակ մի դասակարգ միւս դասակարգի դէմ կը թշնամանայ։

Մենք այժմ այս կամ այն կուսակցութեան յարելու համար ոչ կարողութիւն և ոչ ծանօթութիւն ունենք։ Մենք, առ այժմ, այս հարցում իսլամականութեան ծայրը ձեռքից բաց թողնելու չենք, այլ աշխատելու ենք։ Դրա համար էլ մեր ժողովի անունը «մահմեդականների ժողով» է։

Մեզ այստեղ հաւաքել է միմիայն իսլամութիւնը. մեր ժողովի նպատակը եթէ դասակարգային կարևորութիւն ունեցող հարցեր լինէին, այն ժամանակ «մահմեդականների ժողով» անունը չէինք տալ, այլ մի ուրիշ անուն կը գտնէինք, և հետևաբար այդ համաժողովին կարիք էլ չէր լինի, և կը միանայինք դասակարգային խորութիւններով յայտնի եղող կուսակցութիւններից մէկին։

Ձեռքից բաց չը թողնենք, չը մոռանանք իսլամութիւնը։ Ինչ որ մեզ հարկաւոր է, այն է, որ մենք ուժեղացնենք «մահմեդական ժողովը» և աշխատենք ամեն տեսակ կուսակցութիւններից և դասակարգերից բարձր և ուժեղ դարձնել մեր համերաշխութիւնը, միութիւնը։ Բացի այդ, մեր ժողովրդին պէտք է լաւ բացատրենք բոլոր կուսակցութիւնների ինչ լինելը և ինչ նպատակների ձգտելը: Ամեն գրիչ ձեռք բռնողը, ամեն լրագիր, տպարան ունեցողը պէտք է աշխատի այս գործի համար:

Մեր ժողովուրդը հասկանալուց յետոյ, որը որ օգտակար համարէ նրա ետեւից կը գնայ:

Բայց այժմ ազգէտ ազգի անունից ասել, որ «մենք այս ինչ կուսակցութեան անդամ ենք, այն ինչ կուսակցութեան հետևող» խելօք բան չէ: Ուշադրութիւն մահմեդականներ:

Այս գրութեան տակ ստորագրել են «դալլաբալար»—ուսանողներ, կամ աւելի ճիշդ կը լինէր թարգմանել սեմինարիստներ: Աւելորդ է ասել, որ այս մի տեսակ կոչով մահմեդական ուսանողները իրանց ժողովրդին հրաւիրում են «առանձնացման»: Թէ որքան օգտակար է այդ մեկուսացումը, թէ մահմեդականների և թէ երկրի համար, ցոյց է տալիս արդէն ներկայ իրականութիւնը: Սա մի տեսակ հերքումն է կազմում նոյն իսկ այն լուրերի դէմ, որ իբրև թէ մահմեդականները յարել են սահմանադիր-ռամկավար կուսակցութեան:

*

Վիտտէի բէակցիօնական մինիստրութեան կազմը հետզհետէ քայքայվում է: Այդ կազմից հեռացաւ երկրագործութեան մինիստր Կուտլերը, խօսում են նոյնպէս, որ շուտով հեռանալու են և հետևեալ մինիստրները—Տիմիրեազէվ, Նեմէշաեվ, Ֆիլոսոֆով և կոմս Տօլստոյ:

Այդ առիթով «Вѣкъ» լրագրի մէջ կարդում ենք.

«Մենք չենք կարող չողջունել Կուտլէրի վճռականութիւնը՝ խզել ամեն մի կապ Վիտտէի բէակցիօնական մինիստրութեան հետ և դրանով վերացնել իրանից պատասխանատւութիւնը այն սարսափների համար, որոնք հարկադրված անհրաժեշտութեան պատրուակով գործվում են ներկայումս Ռուսաստանում:

«Խորհող պետական գործիչ, առաջադիմական իդէաների և մարդասիրական ձգտումների տէր Կուտլէրը իր տեղումը չէր իր ընկերակիցների մէջ, այնպիսի խմորված բէակցիօներների մէջ, ինչպէս Դուրնօվօն և Ակիմօվը, կամ այսպիսի անխտիր քաղաքական խաղացողի հետ միասին, ինչպէս Վիտտէն է:

«Եթէ Տիմիրեազէվի, կոմս Տօլստօյի, Ֆիլոսոֆովի և Նեմէշաեվի հրաժարման մասին լուրերը հաստատվեն, այն ժամանակ մինիստրութիւնը կըստանայ, վերջապէս, կազ մի այն միակերպութիւնը, և ուղղութեան այն միութիւնը, որոնք գծագրված էին մինիստրների խորհրդի նախագահի կողմից նրա հոկտ. 18-ի ամենահպատակական զեկուցագրի մէջ:

«Իրանց պաշտօնները թողնող մինիստրները մտան մինիստրութեան մէջ այն րոպէին, երբ մինիստր-նախագահի բէֆորմատորական դիտաւորութիւնները ոչ մի կասկածի ենթակայ չէին:

«Այժմ Վիտտէի բէակցիօնական քաղաքականութիւնը պարզվել է որոշակի, և ինչ անձինք էլ փոխարինեն հրաժարվող մինիստրներին, հէնց այն հանգամանքը, որ նրանք գրաւում են մինիստրական թիկնաթոռները ստրիկանական ճնշման այնպիսի «սիւների» հետ, ինչպէս Դուրնօվօն և Ակիմօվը, կապացուցանէ հաստատակութեան, որ ապարդիւն է որ և է յոյս ունենալ թէ մինչև Պետական Դումայի գումարումը որ և է փոփոխութիւն կարող է տեղի ունենալ կառավարութեան բէակցիօնական քաղաքականութեան մէջ»:

*

«Իրշադ»-ը փետր. 10 թուակիր համարում (№ 43) թարգմանաբար տալիս է «Մշակի» № 22-ում տպված «Ընդհարումների վտանգը» առաջնորդողը, որ վերաբերում էր գարնան թուրքերի սար բարձրանալու հարցին: Լրագիրը ակնարկելով այն կտորին, թէ հայերը խուսափել են և խուսափում են ընդհարումներից, բայց ի հարկէ ոչ ոք չէ կարող երաշխաւոր լինել, որ յանկարծ մի որևէ կէտում չի ծագել մի որևէ թիւրիմացութիւն որը նորից կառաջացնէ մեծ հրդեհ, «Իրշադը», չենք իմանում ինչու, կարծում է թէ մենք հայերս առաջուց պատասխանատւութիւնը թուրքերի վրա ենք գցում: Դա շատ կարևոր հարց է, որով պէտք է զբաղվել ազդու միջոցներ գտնելու համար ապագայ ընդհարումների դէմ: «Իրշադը» փոխանակ հարցի վրա այդ կերպ նայելու, պէտք է ընդհակառակը նպաստէր իր կողմից դրված հարցը բաւարար կերպով լուծելու համար: Ի՞նչ, միթէ երբ ապագայ վըտանգը մենք մատնանիշ ենք անում, նշանակում է վատ գործ ենք կատարում: Այդ նմանում է այն բանին, որ բժշկին ասենք. մի գնաք հիւանդի մօտ, որպէսզի հիւանդի վիճակը չը ծանրանայ կամ հիւանդը չը մեռնի:

Բայց հետաքրքիր է այն պարբերութիւնը, որով վերջացնում է «Իրշադ» իր խորհրդածութիւնները: Ահա նա.

> Իհարկէ, եթէ հայերը գետերի նման հոսող արիւնին և մայիսի անձրևների նման թափվող արցունքին պատճառ հանդիսացող յիմար «Դաշնակցութիւնից» ձեռք չը քաշեն և մահմեդականների հետ ինչպէս անցեալում բարեկամական յարաբերութիւններ չը մշակեն, ոչ ոք չէ կարող ապահով լինել ապագայի համար: Բայց, դժբախտաբար, հայերը այդ խելացի ձեռնարկից հեռու են մնում: Ափսոս, երկու կրակի մէջ մնացած անճար հայերի դրութեան:

Մենք գիտենք, որ «Իրշադը» չէ կարող հաշտվել «Դաշնակցութեան գոյութեան հետ: Դա մի ճակատագրական իրողութիւն է, երևի, որի դէմ ոչինչ չենք կարող անել: Չէ՞ որ «Դաշնակցութիւնը» ստեղծված է Թիւրքիայում գործելու, թիւրք արիւնարբու ռէժիմի դէմ կռվելու: Այդ արդէն հերիք է, որ Աղայեվի հոգեւյատակութիւնը պղտորվի, նոյն իսկ եթէ Կովկասում դադարեն հայ-թուրքական ցաւալի ընդհարումները: Թիւրքիան, մանաւանդ սուլթանի ռէժիմը սրբութիւն-սրբոց է, որին չըպէտք է ձեռ տալ... Բայց մենք հարց ենք տալիս «Իրշադ»-ին. դուք էլ ունէք կուսակցութիւններ և մարտական կազմակերպութիւններ, որոնք ձեր սովորութեան համեմատ միշտ գործում են մութի մէջ: Արդեօք այդ կուսակցութիւններն ու կազմակերպութիւնները ցոյց տուել են այն գաղափարական գիծը, որով հանդէս է եկել միշտ, թուրք-հայկական ընդհարումների երկարաձիգ ընթացքում, «Դաշնակցութիւնը». արդեօք ձեր այդ կազմակերպութիւնները երբ և իցէ դիմել են խաղաղութեան, հաշտութեան, համերաշխութեան կոչով հայերին, գոնէ մի անգամ, թէկուզ սխալմամբ: Երբէք: Ընդհակառակը, «Դաշնակցութիւնը» միշտ քարոզել է եղբայրութիւն, խաղաղութիւն, թէ եղբայրասպան կռւի սկզբներում և թէ այնուհետև ամեն յարմար առիթով: Բայց այդ կոչերը ոչ միայն չեն ազդել մահմեդական ղեկավարների վրա, այլ աւելի վատ, նրանք զէնք են դարձրել այդ կոչերը հայերի դէմ, իշխանութեան գանգատվելով, որ հայերը ուզում են իրանց մոլորեցնել, հրաւիրում են կռւել ռուս կառավարութեան դէմ: Հայ ժողովուրդը, վճռապէս ասում ենք, ցանկացել է և ցանկանում է խաղաղութիւն: Բայց երբ նա տեսել է, որ իր եղբայրական աղաղակները չեն ազդում, երբ նա համոզվել է, որ թուրք ամբոխը ականջից չէ լսում, նա ստիպված, ակամայ դիմել է միակ լաւի միջոցին—խփել է:

Դաշնակցութիւնը, որ նպատակ է դրել կռւել Թիւրքիայում, միշտ յայտարարել է և յայտարարում է, որ ոչինչ չունի բուրք ժողովրդի դէմ, որը նոյնքան դժբաղդ է սուլթանի բէժիմի տակ, որքան հայը: Բայց ում պէտք է հասկացնել այս բոլորը...

*

«Нов. Обозр.» լրագիրը, որ դադարեցրված էր յունվարի 24-ին, վերսկսեց իր հրատարակութիւնը ամսի 14-ից: Այդ օրվայ առաջնորդողը նուիրված է հայ-թուրքական արիւնահեղ ընդհարումների ցաւալի տարեդարձին:

«Ամբողջ տարի է շարունակվում է այս դժոխքը, այս կոշմարը, սպանութիւնների և աւարառութիւնների այս փախանալիան—և որ ամենից սարսափելին է, չենք տեսնում մի նշան, որ գուշակէր թէ լոյսը շուտով կը ծագի. ամեն կողմից լսվում են միայն անմիտ կռուի նորանոր բռնկումների, չարամտութեան նոր արտայայտութիւնների մասին: Մթնացել է խելքը, քարացել են մարդկանց սրտերը և երեկվայ եղբայրները շարունակում են կատաղաբար, մի տեսակ արիւնարբութեամբ, հարուածներ տեղալ միմեանց վրա: Համոզմունքի խօսքը այլ ևս չէ ներգործում, մոռացվել են մարդկային և աստուածային բոլոր օրէնքները»:

ԹԻՖԼԻՍ ՔԱՂԱՔԻ ԵՒ ՆՐԱ ԳԱՒԱՌԻ ԳԵՆԵՐԱԼ-ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Աչքի առաջ ունենալով Թիֆլիս քաղաքում և նրա գաւառում զինված մարդկանց յարձակման կրկնվող դէպքերը խաղաղ բնակիչների վրա հէնց իրանց տան մէջ, դոյքը յափշտակելու կամ թէ յեղափոխական նպատակների պատրուակով և նուիրաբերութեան անուան տակ փող կորզելու համար, յայտարարվում է, որ այս ուհետև կենխամատածութեամբ սպանութեան, գողութեան, յափշտակութեան և զինված, մարդկանցից բացարձակ փող կորզելու համար Թիֆլիս քաղաքում և նրա գաւառում, յանցաւորները (համաձայն 23 յօդ. II հատոր. ուս. կայս. օրէնք. ժող. հրատար. 1892 թ. և 269 և 279 յօդ. XXII օրէնսգրքի 1869 թւ., հրատ. III) կենթարկվեն զինուորական դատարանին, դատվելու պատերազմական ժամանակի օրէնքներով:

Ուստի պարտք եմ համարում բացատրել, որ յիշեալ օրէնքները վերոգրեալ յանցանքների համար դատապարտվածներին մահվան պատիժ է նշանակում: Ցայտարարելով այդ մասին ի գիտութիւն ամենքի, ես միևնոյն ժամանակ հրաւիրում եմ իրան, ազգաբնակութեանը օգնել ինձ Թիֆլիս քաղաքը և նրա գաւառը զանազան տեսակ յափշտակողներից մաքրելու գործում և այդպիսի ամենաչնչին փորձերի համար նոյն իսկ անյապաղ դիմել զօրքի և ոստիկանութեան աջակցութեանը, որոնց հրամայում եմ ինչ որ էլ լինի անպատճառ բռնել յանցաւորներին, անհրաժեշտ դէպքում գործել մինչև անգամ պաղ զէնքով և հրազէնով:

Ստորագրեց. Թիֆլիս քաղաքի և գաւառի ժամանակաւոր գեներալ-նահանգապետ գեներալ-մայոր Տիմօֆէյէվ:

12 փետրվարի 1906 թւ.
Թիֆլիս:

ՍԵՆԱՏՕՐ ԿՈՒԶՄԻՆՍԿՈՒ ՏԵՂԵԿԱԳՐԻՑ

(Ժանդարմերիան և ոստիկանութիւնը)

V

Աչքի առաջ ունենալով ապրուստի չափազանց թանգութիւնը Բագւում և ոստիկանական պաշտօնեաների ռոճիկների անբաւարար լինելը, ոստիկանութիւնը կազմվում է պատահական, անպատրաստ և անյուսալի տարրերից: Ոստիկանութեան մէջ, մանաւանդ քաղաքապահների (городовой) և թաղական վերահսկիչների (околоточный) պաշտօնի համար, մտնում են այնպիսի մարդիկ, որոնք հնարաւորութիւն չունեն ուրիշ պաշտօններ գտնելու կամ թէ «որոնք ապօրէնի կերպով հարստանալու հնարաւորութեամբ հրապուրվում են»: Բագու քաղաքի ոստիկանութեան ստորին պաշտօնեաների կազմը, ըստ ազգութեան, հետևեալ կերպով է բաղկացած:

227 քաղաքապահներից՝ 15 հոգի վրացի են, 68-ը թուրք և 144 ռուսներ: 27 թաղական վերահսկիչներից՝ 1 հոգի թուրք է, 2 հայ, 3 վրացի և 21 ռուս: Աւելորդ է ասել, որ ոստիկանութեան ստորին պաշտօնեաները մեծ մասամբ զուրկ են ամենատարրական կրթութիւնից: Թաղական վերահսկիչները կիսագրագէտ են: Պրիստավներից մէկը միայն բէալական ուսումնարանի դասընթացը և հետևակ իւնկերների ուսումնարանի դասընթացքն էր աւարտել, չորսը հազիւ էին անցել գիմնազիայի մի քանի դասարաններ, իսկ վեցերորդ պրիստավը և պրիստավների բոլոր օգնականները ստացել էին միմիայն «տնային» կրթութիւն, մի և նոյն ժամանակ նրանցից մի քանիսը այն աստիճանի անընդունակ են և անգրագէտ, որ անհասկանալի է մնում, թէ ինչպէս կարելի էր նրանց տալ այդպիսի պաշտօններ:

Հասարակական ապահովութիւնը և կարգը պահպանելու վերաբերմամբ քաղաքային ոստիկանութիւնը ներկայացնում է «բիրտ կամայականութեան և իր գործողութիւնների կատարեալ անհամաչափութեան չափազանց ցաւալի ու տգեղ մի պատկերը»:

Բագուի ամբողջ ազգաբնակութիւնը գիտէ, որ քաղաքում կան առանձին մասնագէտ անձինք, որոնք զանազան տեսակ սրիկայական խմբեր կազմակերպելով են զբաղվում և նրանց միջոցով էլ կատարում են բազմաթիւ յանցանքներ, իսկ, գլխաւորապէս, սպանութիւններ: Դրանք «ղօչի» կոչվողներն են: Չը կայ որ և է մի խոշոր յանցանք, որ կատարված չը լինի առանց այդպիսի թուրք կամ հայ «ղօչիների» աջակցութեան: Բայց ոստիկանական պաշտօնեաների համար, ինչ ինչ պատճառներով, նրանք անմատչելի են մնում: Բացի դրանից, Բագւում գոյութիւն ունեն առանձին թէյատներ՝ «չայչիներ» որտեղ շարունակ ժամանակ են անցկացնում անգործ թուրքեր, որոնք մեծ մասամբ ընդունակ են մի քանի ռուբլով ամեն տեսակ սպանութիւն կատարելու: Բագուի պրիստավներից մէկը, որ սպանութեան մի գործի համար վկայ էր կանչված, դատաքննում հարցաքննութեան ժամանակ ասել էր. «Այդ թէյատները ոչ այլ ինչ են, բայց եթէ յայտնի գրասենեակներ մարդասպաններ վարձելու համար»:

Սակայն ոստիկանութեան պաշտօնեաները, մասամբ իրանց անգործութեամբ և ձեւական վերաբերմունքով դէպի գործը, մասամբ էլ «անձնական ու շահասիրական դիտումներով» բոլորովին ուշադրութիւն չեն դարձնում նրանց վրա:

Աւելի աննախանձելի ու տխուր վիճակի մէջ է գտնվում ոստիկանութեան հետախուզական գործունէութիւնը, անմիջապէս յանցանքը գործելու րոպէից սկսած: «Որքան էլ դա տարօրինակ է թւում, բայց և այնպէս քննիչները և դատախազները հաւատացնում են, որ նախնական քննութեան աջողութեան վրա կարելի է յոյս դնել աւելի շուտ այնպիսի պայմաններում միայն, եթէ որ ոստիկանութիւնը դեռ ևս ձեռնամուխ չէ եղել գործին»: Միևնոյն եզրակացութեան եկաւ սենատորը, քննութեան տակ ընկած գործերի հետ ծանօթանալուց յետոյ:

Այնուհետև, խօսելով Բագուի նահանգի գաւառական և գիւղական ոստիկանութեան գործունէութեան մասին, սենատոր Կուզմինսկին բաժանում է նրան երկու կարգի. «Նրանցից մէկը բաղկացած է վաղուց արդէն ծառայող և տարիքաւոր պրիստավներից, որոնք անտարբեր են վերաբերվում դէպի իրանց պարտականութիւնները: Նրանց խնամատարութեանը յանձնված գաւառամասերում անարգել կերպով ծաղկում են անօրինաւորութիւնները, որը այնքան քայքայիչ ու վնասակար են ազդում ազգաբնակութեան վրա: Վերջինս նրանց (պրիստավներին) չէ դիմում. որովհետև ոչ մի օգուտ չէ տեսնում այդ դիմումներից և, երևի, այդ տեսակ, բոլորովին ապարդիւն, ծախսերի փոխարէն ոչինչ էլ չէ ստանում: Իսկ միւս պրիստավները, ընդհակառակը, գործում են մեծ եռանդով, բայց կաշառքներ են վերցնում անխնայ կերպով»: Կաշառակերութեան օրգինալ տեսակներից մէկը Ղուբայի գաւառում կաշառք վերցնելու ընդունված ձեւն է, որ նրանք անում են, որպէս զի արգելք չը լինեն ամեն տարի գարնանը այդ կողմերում երևացող աւազակներին հարկեր ժողովելու ձուկ արդիւնաբերողներից, սպանելու կամ հրդեհելու սպառնալիքով: Ցամաքող արդիւնաբերողներին աւազակները յաճախ գերի են վերցնում և նրանց ազգականներից փրկանք ստանալով բաց են թողնում»: Այնուամենայնիւ գաւառական ոստիկանութեան պաշտօնեաների բարոյական մակերևոյթը չէ կարելի, սենատորի կարծիքով, հաւասարեցնել Բագուի ոստիկանութեան վերոյիշեալ մակերևոյթին: Ցաճախ ահագին ազդեցութիւն է ունենում գաւառապետի անձնաւորութիւնը Շամախու գաւառում «Հնորհիւ պետական խորհրդական Դժիմբէնկօյի անկասկած անշահասիրութեան, կաշառակերութիւնը համարեա ոչ մի տեղ չէ նկատվում: Գանգատների տեղիք չէ տալիս և Բագուի գաւառապետ» ստատսկի-սովետնիկ Բօզդանովիչը և նրա ստորադրեալները: Ի դէպ նկատենք, որ բացառութիւնների մասին խօսելով, սենատորը մեծ յարգանքով է խօսում Բագուի նախկին ոստիկանապետ իշխան Վօլկօնսկու մասին:

Բացի ոստիկանութիւնից, Բագուի նահանգի ազգաբնակութիւնը տուժում է նոյնպէս ոստիկանական պաշտօնեաներից և գիւղական իշխանութիւնների համար ճարակ կաշառակերութիւնից, գլխաւորապէս գիւղական շտարշինաներից,—որոնք միմիայն հարստանալու նպատակով էլ աշխատում են ստանալ այդ պաշտօնները, նոյն իսկ գաւառական իշխանութեանը բարձր պաշտօնեաներին կաշառելու միջոցով:—«Իսկ եթէ ի նկատի առնենք, եզրափակում է սենատոր Կուզմինսկին, որ ոստիկանութեան գործողութիւնների մասին բարձր իշխանութեանը տուած ոչ մի գանգատներ չեն հասնում իրանց նպատակին և չեն նպաստում դրութեան բարելաւելուն, և որ այդ բոլորի հետ միասին գիւղական ազգաբնակութիւնը տառապում է նոյնպէս հոգևորականների կողմից, ունենալով իր տրամադրութեան տակ անբաւարար հողաբաժիններ ու հարկադրված լինելով վճարել տարէցտարի աւելացող հարկերը, որի համար էլ համարեա նահանգի ամբողջ ազգաբնակութիւնը գլխովին գանգատվում է,—այն ժամանակ ակներև կը դառնայ անպաշտպանութեան և ստրկացման, բիրտ կամայականութեան և ապօրինութիւնների այն անտանելի, անչափ ծանր վիճակը, որոնց մէջ խճճված է գիւղական ազգաբնակութիւնը»:

(Կը շարունակվի)

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

Երկուշաբթի, փետրվարի 13-ին, կայացաւ քաղաքային խորհրդի նիստը, որի մէջ քննվեցին հետևեալ խնդիրները.

1) Նախկին նիստի արձանագրութիւնը կարդալուց յետոյ իրաւասու բժ. Վարդանեանը նկարագրելով՝ թէ քաղաքիս մէջ ամեն օր գիշեր ու ցերեկ ինչ տեսակ չը տեսնված յանդուգն ոճրագործութիւններ և կողոպուտներ են կատարվում անպատիժ, ինչպէս, օրինակ, օրը ցերեկով Ցակոբեանի սպանութիւնը, Ալեքսանդրեան պղնձահանքի կառավարիչ Գեյդմանի ձեռքով 15000 ռ. յափշտակութիւնը Լաբորատորնի փողոցի վրա, բժ. Մայսուրեանցի վիրաւորելը, Կօչենեաեվի դուքանը (Կուկիա) և նրա մէջ գտնվող ժողովրդի կողոպուտը և այլն... և որ քաղաքի այս երկիւղալի դրութիւնը ստիպում է բնակիչներին գիշերվայ ժամի 8-ից յետոյ տներից չը դուրս գալ—հարց բարձրացրեց թէ արդեօք ինչ դրութեան մէջ է գտնվում քաղաքային խորհրդում իր ժամանակին քննված քաղաքիս ոստիկանութիւնը կարգ ու կանոնի գցելու խնդիրը:

Քաղաքագլխի պաշտօնակատարը այս խնդրի առիթով բացատրութիւն է տալիս, որ խորհրդի կողմից ընտրված են եղել երեք ազգութեան (ռուս, հայ, վրացի) պատկանող իրաւասուներից մասնաժողով 6 հոգուց բաղկացած՝ այդ խնդրով զբաղվելու և Փոխարքայի գիւանատան կողմից նշանակված պաշտօնեայի հետ միասին մի քանի նիստեր են ունեցել և մինչև անգամ մշակվել է ոստիկանութիւնը քաղաքային ինքնավարութեան իրաւասութեան ենթարկելու և նրա գործունէութիւնը կանօնաւորելու մի նախագիծ, բայց յետոյ, անյայտ պատճառներով, նիստերը դադարել են: Քաղաքային խորհուրդը՝ ի նկատի ունենալով բնակիչների անապահով վիճակը և սպառնացող վտանգը, որոշեց՝ միջնորդել նահանգապետի առաջ, որ ոստիկանութեան կարևոր խնդիրը հերթական առարկայ դարձնէ և բաւարար լուծումն տրվի:

2) Քաղաքային լոմբարդի ծառայող Լիսիցեանին, որը 18 տարի օրինակելի կերպով իր պաշտօնը վարելուց յետոյ՝ հիւանդութեան պատճառով ստիպված է թողնել ծառայութիւնը՝ խորհուրդը որոշեց յատկացնել տարեկան 480 ռ. կենսաթոշակ:

3) Կարդացվեց իրաւասու պ. Ն. Գրիգորեանի յայտարարութիւնը՝ ընտրել մի խառն մասնաժողով քաղաքային իրաւասուներից և պետութեան պաշտօնեաներից՝ որոշելու քաղաքիս մէջ տեղի ունեցած շահատակութիւններից, հրդեհներից և աւերումներից՝ թէ մասնաւոր անձինք և թէ զանազան հիմնարկութիւնները ինչ գումարի վնասներ են ստացել. այդ հաւաքած նիւթը կարող է ծառայել ապագայում՝ պահանջելու պատասխանատու անձերից և կամ հիմնարկութիւններից, երբ այդ հարցը կը պարզվի, հասցրած վնասների գումարները: Քաղաքային խորհուրդը սկզբունքով ընդունելով այս առաջարկութիւնը՝ որոշում է ընտրել 5 հոգուց բաղկացած մի մասնաժողով, յատկապէս և միայն քաղաքային իրաւասուներից: Ընտրվում են գաղտնի քուէարկութեամբ հետևեալ անձինք —Ն. Գրիգորեան, Ա. Բարօվ, Ի. Ալիխանօվ, Վ. Կանդուրալօվ և Սօսին:

4) Քննվեց Հալաբարի Մնացականեան կամուրջը կապալով տալու խնդիրը, որից իմացվեց որ կապալի գումարը զգալի կերպով պակասել է՝ 7000-ից տարեկան հասել է 3000 ռ. և սրա պատճառը այն է, որ, երբ տաւար ու ոչխար մասամբ անց են կացնում նոր, երկաթուղու գծից ոչ հեռու բացված ճանապարհով, մինչդեռ Վերայի կամրջի եկամուտը ամեն տարի աճելով 13000-ից ներկայումս հասել է կապալի գինը—25,500 ռ.: Քաղաքային խորհուրդը մինչև Մնացականեան կամրջի եկամտի նուազելու իսկական պատճառների լուսաբանելը որոշեց է կապալով տալ՝ կամուրջը միայն կարճ, այն է, 2 տարի ժամանակով:

5) Հետաքրքիր խօսակցութեան առարկայ է դառնում քաղաքիս ոստիկանապետի յայտարարութիւնը՝ վերսկսելու հացչեների գրասենեակի գործը: «Մշակ»-ի ընթերցողներին յայտնի է, որ անցեալ նիստում քաղաքային խորհուրդը՝ չը համաձայնելով քաղաքային վարչութեան պատասխանի հետ, որոշել էր պ. ոստիկանապետի այս նոր յայտարարութիւնը ենթարկել քաղաքային խորհրդի քննութեան և խորհրդի կողմից տալ պատճառաբանված պատասխան: Իրաւասուները մի առ մի նկարագրեցին՝ թէ հացչեների գրասենեակը իր առաջվան գործավարութեամբ ինչ ահագին ծախսերի տակ էր գցում տանտէրերին, թէ ինչ կամայականութիւններ էին կատարվում ոստիկանատան մանր պաշտօնեաների ձեռքով և թէ բնակիչները, բացի գրքերի և բլանկների ծախսերից, ինչպիսի տուգանքների էին ենթարկվում, շատ անգամ միանգամայն ապօրէնի, այս կամ այն ոստիկանի կամայականութեամբ միայն: «Միայն ես, որպէս տանտէր, յայտնում է իրաւասուներից մէկը, ամսական ուղիղ 15 ռ. ծախս ունէի ոստիկանութեան պահանջները հացչեների վերաբերութեամբ կատարելու և չը նայելով դրան, դարձեալ ենթարկվում էի զանազան ճնշումների»: Մտքերի փոխանակութիւնից յետոյ քաղաքային խորհուրդը կայացրեց հետևեալ վճիռը: Ի նկատի ունենալով որ ներկայումս քաղաքի բնակիչները նոր նոր հարկերով ծանրաբեռնվեցին (օրինակ՝ միայն նոր կաղապարի լապտերները, հաշւելով քաղաքումս տների թիւը 15000, աւելի քան 35,000 ծախս է կլանել բնակիչներից, չը հաշւելով դեռ ամեն գիշեր այրվող նաւթը), և որ առաջվան ձեւով գրասենեակի գործավարութիւնը աւելի ևս պիտի ծանրանայ բնակիչների վրա, որոնք առանց այն էլ ներկայումս նիւթական ծանր դրութեան մէջ են— միջնորդել ուր հարկն է, որ հացչեների գրասենեակը իսպառ վերացվի քաղաքումս:

6) Վերջին խնդիրն էր՝ էլեկտրաքարշի անանուն ընկերութեան յայտարարութիւնը՝ Փունիկուլեօրի ներքին մասը միացնել էլեկտրաքարշով քաղաքիս միւս գծերի հետ—որի համար ընկերութիւնը ներկայացրել էր նախագիծը: Քաղաքային խորհուրդը ընդունեց անանուն ընկերութեան առաջարկած նախագիծը և որոշեց՝ Երևանեան հրապարակից մինչև Փունիկուլեօրի ներքին կայարանի համար երթևեկողներից առնել 10 կ., իսկ Վաղնեանի փողոցից նստողները պիտի վճարեն 5 կոպ.: Փունիկուլեօրը, այդ միացնող ճանապարհը բացվելուց յետոյ, պիտի բանէ տարվայ բոլոր եղանակներին: Նիստը փակվեց գիշերվայ $11^1/_4$-ին:

Ն. Կ. ՄԻԽԱՅԼՕՎՍԿՈՒ ԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Պետերբուրգում, յունվարի 20-ին Ն. Կ. Միխայլօվսկու մահվան տարեդարձի օրը, Վօլկօվի գերեզմանատանը կայացաւ նրա արձանի հանդիսաւոր բացումը: Արձանը անդրիագործ Գինցբուրգի աշխատութիւնն է: Նրա մարմարեայ պատուանդանի երեսի կողմում դրված է Ն. Կ.-ի կիսարձանը ճիշտ այնպէս, ինչպէս որ նա էր իր կեանքի վերջին տարիները: Կիսարձանի յետևի մասում և ներքևը քարից քանդակված են գրքերի նկարներ: Պատուանդանի վրա ոսկի տառերով փորագրված է. «Նիկոլայ Կոնստանտինօվիչ Միխայլօվսկուն, իր յարգողները»: Արձանի բացմանը ներկայ էին հանգուցեալի բազմաթիւ յարգողները և բարեկամները: Սովորական համաձայն հոգեհանգիստ կատարեցին, որից յետոյ սկսվեցին ճառախօսութիւնները: Առաջին ճառը արտասանեց Վ. Ի. Սեմեւսկին, շեշտելով, որ իր գրական գործունէութեան հէնց—60-ական թւականներից մինչև մահը, Ն. Կ. Միխայլօվսկին գերիշխում էր մի ամբողջ շարք սերունդների մտքերի վրա: Լինելով համոզված սօցիալիստ, Միխայլօվսկին, հակառակ իր շատ համախոհների և ժողովրդական ազատութեան խմբերի, անհրաժեշտ էր համարում, նախ քան սօցիալիզմի յաղթանակելը Ռուսաստանում, սահմանադրական կառավարութեան ձեւ մտցնել:

«Р. В.»

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Փետրվարի 10-ին

Նոյեմբերի 20-ին Աննեֆելդ գերմանական աւանից, օր ցերեկով, հայերի խանութները թալանի, հրդեհի են մատնվում և 24 հոգի նոյն հայերից գերի են ընկնում: Ճանապարհին քանի անգամ Սուլթան-բէկ Շամքօրսկին ուզում է սրի անցկացնել բոլոր գերիներին, բայց իրանից աւելի ուժեղ մի սիւնի դաւանութեան բանակ—արգելք է լինում կոտորածին: 24 հոգուն տանում են բանտարկում Ղարաջամեոլու գիւղում Մեշադի Մօվսումի տանը:

Հետևեալ օրը, պրիստաւ Իսմայիլ-բէկի առաջարկութեամբ և Աւետիս Գրիգորեանի ու Սարգիս Բաղդասարեանի ձեռներեցութեամբ գերմանացիների շրջանում մի ժողովարարութիւն են անում, հաւաքում են 800 ռ. փող և Իսմայիլ-բէկի ձեռքով ուղարկում են գերիների փրկանքը:

Իսմայիլ-բէկը փրկանքագնի մեծ մասը իրան բաժին վերցնելով, մնացորդը յանձնում է գերի տանողներին. վերջիններս էլ 22 գերիներին վերադարձնում են, իսկ 2 հոգու, այն է Անուշ Բաղդասարեանին և Բալախանում Գրիգորեանին՝ իրանց մօտ են պահում:

Ինչպէս իշխանութեան, նոյնպէս մեզ՝ հայերիս յայտնի էր գերիների ուր լինելը: Մի քանի օր առաջ դրանց երկուսի փրկութեան համար թուրքերի կողմից 300 ռ. փրկանք առաջարկողներ են եղել:

Բայց մինչ այս մինչ այդ, երկու օր առաջ, կառավարութեան կարգադրութեամբ, կօզակներով շրջապատում են նրանց կացարանը, և նրանք պահապանների հսկողութեամբ սայլով տեղափոխվում են Գանձակ:

Գերիներին բերած օրը, մեզ անհասկանալի պատճառով, յանձնումը յետաձգեցին հետևեալ օրվայ: Այսօր Անուշ Բաղդասարեան ծնողներին յանձնեցին Անուշին: Իսկ Բալախանումի ամուսինը վերադարձաւ ձեռնունայն: Բալախանումն իբրև թէ համաձայն չէ ամուսնու մօտ վերադառնալու, «որովհետև հայերի մօտ սև երես է, չէ կարող առանց ամօթի մտնել»: Եւ իշխանութիւնը Բալախանումի պատճառաբանութիւնը օրինաւոր ճանաչելով—Նրան նորից յանձնում է թուրքերին: Եւ այդ բոլորը կատարվում է մի քանի րոպէի ընթացքում, մի խումբ շրջապատված սպառնալի թուրքերի ներկայութեամբ: Եւ մինչ Գրիգորեանը դիմում է ծխական քահանային և ուրիշների օգնութեան, Բալախանում Գրիգորեանին թուրքերը թռցնում են:

Մենք խօսեցինք Անուշ Բաղդասարեանի հետ. սա մի 16—17 տարեկան օրիորդ է, սիրուն, ամօթխած և համակրելի դեմքով: Նրա գլխին եկածի մի քառորդ պատմութիւնն անգամ շատ բան է հասկացնել տալիս:

Նրանց հետ Գանձակ են գալիս նաև 2 կին և 6 թուրքեր, որոնք նրանց ճանապարհին համոզելիս են եղել, որ չը վերադառնան իրանց ծնողների մօտ, և եթէ իշխանութիւնը հարցաքննէ, ասեն, որ իրանք իրանց կամքով են գնում թուրքերի մօտ: Նրանց հաւատացնում են, որ հայերը տանում են նրանց սպանելու համար, հաւատացնելով, որ իրանց ծնողները Աննեֆելդում սպանված են...

Բալախանումը կատարում է թուրքերի պատւէրը... և վերադարձնում են թուրքերին: Բալախանումը 18 ամեայ ջահել հարսն է: Նրան ամուսնացրել են 12 տարեկան հասակում և նա ամուսնութեան օրից սկսած ամսական 2 անգամ ուշաթափվելիս է լինում:

Նա թուրքերի մօտ եղել է ամիսներով պանեկի տակ.—հետևաբար կարող է պատահել և անբնական դրութեան մէջ... Շրջապատված թուրքերով և նրանց ազդեցութեան ու բռնութեան տակ, նա մինչև անգամ զրկված է եղել ամուսնուն ուղիղ նայելու հնարաւորութիւնից... Եւ առանց նրան բժշկական քննութեան ենթարկելու, նրա ցուցմունքը օրինաւոր ճանաչելով՝ նրան վերադարձնում են թուրքերին: Ուրեմն կարելի է կարծել, որ նրան գերի չեն տարել, այլ ինքն իր կամքով թուրքերին սիրել է ու գնացել... Այդպէս են հաւատացրել թուրքերն, ուրեմն ուղիղ կը լինի...

Ա՜խ ժամանակ, ա՜խ բարքեր, որ քան փչացած էք...

Աւ. Սահակեանց

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

Փետրվարի 7-ին

Ամսիս 4-ին, շաբաթ, տեղիս սիրողները իգական ուսումնարանի թատրոնական դահլիճում մի ներկայացում տուին, յօգուտ երկսեռ ուսումնարանի: Խաղացին Սունդուկեանցի «Պէպօ» դրաման: Պէպօյի դերը կատարում էր պ. Ա. Սինանեանց, որը բաւարար կարելի էր համարել՝ Կակուլու դերում լաւ էր պ. Ջալդրանեանցը. նոյնպէս լաւ խաղաց Գիքօյի դերում՝ պ. Ռ. Ազարեանց: Իսկ ամուսիններ Արխիպեանները՝ առաջինը, այրը՝ Ցարութիւնի դերում, երկրորդ կինը՝ Եփէմիայի դերում՝ շատ լաւ էին: Միւսները նոյնպէս համեմատաբար բարեխղճութեամբ էին վերաբերվել իրանց դերերին: Ներկայացման վերջում պարեր սկսվեցին: Սիրողները խոստացան Զատկից յետոյ մի շարք ներկայացումներ տալ՝ դարձեալ յօգուտ ուսումնարանի: Սակայն ցաւալի յայտնեցին, որ վաճառական դասակարգը չէ յաճախում թատրոն. իրաւ, այդ օրը իրանց բացակայութեամբ փայլում էին մեր վաճառականները...

Մի քանի օր առաջ նոյն երիտասարդները մի երեկոյթ սարքեցին դարձեալ յօգուտ ուսումնարանի, ինչպէս նաև Ջրօրհնէքին «աւետիս» մաղթ եկան նոյն նպատակով: Գովելի է դրանց աշխատանքը՝ տեղական ազգային ուսումնարանի նիւթականը բարձրացնելու գործում: Սակայն աւելի գովելի կը լինէր մեր ուսուցչական խմբի գործունէութիւնը, երբ նա մի փոքր ուշ դարձնէր նաև մեր մատաղ սերունդի ուսման -կրթութեան մասին. այդ էլ պէտք է խիստ ուշադրութեան առնվի:

Երէկ, փետրվարի 6-ին, տեղիս ս. Կարապետ եկեղեցում տեղական երիտասարդութեան նախաձեռնութեամբ տարեդարձ—հոգեհանգիստ կատարվեց Բագուի առաջին անգամ հայ-թուրքական ընդհարման զոհերի յիշատակին: Ճառեր խօսեցին Ա. Սինանեանցը, Արտակ վարդապետը և Վ. Ափրիկեանցը: Դրանց բոլորի խօսքը պտտւում էր այն բանի շուրջը, որ հայ-թուրքական անմիտ եղբայրասպանութեանը վերջ տալու համար՝ մեզնից ամեն ոք պէտք է իր բարոյական ոյժերի չափ հասկացնէ մեր խաւարամիտ հարևաններին իրերի վնասակար դրութիւնը և որ մեր սեփական շահը, առաջադիմութեան պայմանները ստիպում են մեզ ձեռք վերցնել այդ անմիտ կռւից, որը յետ է մղում մեզ մեր քաղցր նպատակներից, որոնք անյետաձգելի են ներկայ րոպէում... Ժողովուրդ քիչ կար եկեղեցում:

Գ. Սինանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փոխարքայի նիստին կից հաստատված առանձին խորհուրդը, որ պէտք է երէկ փետրվարի 15-ից սկսէր իր գործունէութիւնը մշակելու համար այնպիսի միջոցներ, որով այսուհետև կարելի լինէր հայերի ու թուրքերի մէջ զինված ընդհարումների առաջն առնել, թուրք ազգաբնակութեան պատգամաւորների չը գալու պատճառով յետաձգվում է փետրվարի 20-ին:

—

«Մշակի, ընթերցողներին յայտնի է կազենցի հայերին հասած աղէտը, որոնք ներկայումս գտնվում են Թիֆլիսում: Փետ. 13-ին, քաղաքային խորհրդի նիստում, իրաւասու Ե. Ի. Պասրօվը (կառավարիչ Թիֆ. Փոխ. վարկի ընկերութեան) խորհրդին յայտարարեց, որ իրան այս օրերս կապիտան Դօբրժանսկին ներկայացրել է 750 ռ. դրամ, յօգուտ կազենցիների և խնդրել է՝ հասցրել այդ դրամները ուր հարկն է՝ բաժանելու տառապեալներին և որ ինքը իր կողմից առաջարկում է քաղաքային խորհրդին ստանալ իրանից այդ գումարը և իր հսկողութեամբ և վերահսկութեամբ բաժանել կազենցիներին: Այդ գումարի առիթով մենք վաղը կը տանք կազենցիների բացատրութիւնը, որ անկարող եղանք զետեղել այսօր նիւթի շատութեան պատճառով:

—

Փոխարքային ներկայանալու համար Թիֆլիս են եկել Գանձակի նահանգից մօտաւորապէս 200 հոգի գերութիւնից ազատված հայեր: Նրանց գոյքը յափշտակված է:

—

Ո՞վ չը կարդաց և չը վրդովվեց սենատոր Կուզմինսկու քննութեան արդիւնքը: Թէ ինչ բան է գաղտնի ոստիկանութիւնը Բագւում, այժմ ամենքի համար պարզ է. ասենք առանց այդ քննութեան էլ բաւական պարզ էր: Բայց կարծել, որ նոյն ոստիկանութեան շահատակութիւնները կատարվում էին բացառապէս նաւթաքաղաքում—երեխայութիւն կը լինէր: Դա մի ամբողջ սիստեմ է, որ հրէշաւոր ցանցերով սփռված է բովանդակ կայսրութեան ամեն անկիւններում: «Matin»-ի սեփական թղթակիցը պատմում է հետևեալ վերին աստիճանի բնորոշ փաստը, որի թատերաբեմն է հէնց կայսրութեան սիրտը, Պետերբուրգը: Ճիշտ է, փաստը այնքան այլանդակ է, որ թղթակիցը հարկ է համարում նրա վաւերականութիւնը մեղմացնել վերապահումներ անելով. «Եթէ հաւատանք մի քանի պաշտօնեաների խօսքին, որոնք վճռապէս հաստատում են իրանց հաղորդածի ստուգութիւնը, կոմս Վիտտէն ստացել է փետր. 16-ի (Ն. տ.) գիշերը մի անանուն նամակ, որը մատնացոյց էր անում այն փաստը, թէ գաղտնի ոստիկանութիւնը ինքն իսկ տպել է պրօկլամացիաներ, որոնք սահմանված են ցրվելու «սև հարիւրակ»-ների շրջանում, գրգռելու նրանց հրէաների թալանին և կոտորածին: Հետևեալ օրը, առաւօտեան ժամի 6-ից կոմս Վիտտէն անձամբ, երկու բարձր պաշտօնեաների հետ գնաց գաղտնի ոստիկանութեան մօտ: Եւ իսկապէս գտաւ այնտեղ յիշեալ պրօկլամացիաները և համոզվեց թէ ինչ աշխատանք է կատարում ամեն օր գաղտնի ոստիկանութիւնը իրանից ծածուկ: Ինձ հաստատապէս ասացին, որ կոմս Վիտտէն անմիջապէս գնացել է Ցարսկօէ-Սէլօ գանգատվելու համար դէպքի մասին կայսրին և բացատրելու թէ ահա ինչ տեսակ գործեր են կատարվում հակառակ իր հրահանգների, գաղտնի հրամաններով, որոնց, ըստ երևոյթին, աւելի շուտ են լսում քան իրան: Այս երկու քաղաքական շրջանակներում դէպքը այնքան ծանրակշիռ էին գտնում, որ ոմանք պնդում էին թէ դրա արդիւնքը կը լինի ամբողջ ներքին գործերի մինիստրութեան հրաժարականը: Եւ արդէն կոմս Վիտտէին ընկերացող բարձր պաշտօնեաներից մէկը իբրև թէ հրաժարականը ուղել է: Ցամենայն դէպս պ. Դուրնօվօյի և կոմս Վիտտէի միջև կնքված առժամանակեայ խաղաղութիւնը շատ խախտւած է երևում: Համաձայնութիւնը խզված է: Ժամը ուշ է, թէ ոչ հէնց այս երեկոյ կը ստուգէի սենսացիա առաջ բերող այս լուրերը»: Այժմ հասկանալի է լինում, թէ ինչու վերջին օրերումս լրագիրները խօսում էին Դուրնօվօյի և Վիտտէի անհամաձայնութիւնների, առաջինի հրաժարվելու սպառնալիքին և այդ սպառնալիքը լըռութեամբ ընդունելու մասին: Վիտտէին ընկերացող և յետոյ վրդովված հրաժարական տուող ներքին գործերի բարձր պաշտօնեան իշխան Ուրուսօվը չէ՞ արդեօք, որի հրաժարականի լուրը տպեցին բոլոր լրագիրները:

—

Ուրբաթ փետրվարի 10-ին, Բագւում, Կասում Բէգի մզկիթում, տեղի ունեցաւ այն ներկայացուցիչների ընտրութիւնը, որոնք պէտք է մասնակցեն հայ-թուրքական ընդհարումներին վերջ տալու համար խորհրդակցութեան կոչվող հայ-թուրքական համագումարին: Կարծիքների երկար փոխանակութիւնից յետոյ միաձայն որոշեցին, որ Բագուից ուղարկեն 4 պատգամաւոր և ընտրեցին «Կասպի» խմբագիր Թօփչիբաշեվին, «Իրշադի» խմբագիր Աղաևվին, Խարաֆիլ Հաջիևվին, բժիշկ Կարա բէգ Կարաբէգովին: Ցիշեալ պատգամաւորները արդէն եկել են Թիֆլիս:

—

Ինչպէս յայտնի է, ծխախոտի նոյն իսկ գիլզաների վրա նոր հարկ պէտք է դրվի, այն է՝ բացի եղած հարկից էլի 35 % աւելի: Այս ութով ֆինանսների մինիստրը, մայրաքաղաքի լրագիրների ասելով, կանչել է իր մօտ մի քանի խոշոր ծխախոտի գործարանատէրերին՝ իմանալու թէ նոր հարկը վճարելով գործարանատէրերը ինչ գներ պիտի նշանակեն ծախու ապրանքների վրա։ Զանազանութիւնը նոր հարկ մտցնելուց յետոյ գների մէջ հետեւեալն է՝ 1000 հատ պապիրոսի ակցիզ փոխանակ 2 ր. լինելու է 2 ր. 70 կոպէկ։ Բացի այդ, առաջին տեսակ ծխախոտը 90 կ. և երկրորդ 48 կ. աւելանում է ակցիզի կողմից։ Գործարանատէրերը յայտնել են, որ իրանք այժմեան գներով նոր հարկ մտցնելուց յետոյ, այլ եւս անկարող կը լինեն ծխախոտ վաճառել, եթէ մինչև անգամ նրա յատկութիւնը վատացնեն։

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ յայտնի ռուս տաղանդաւոր գրող Մաքսիմ Գօրկին այս օրերս ուղևորվում է Ամերիկա։

Յունվարի 28-ին Դաղստանի հեծելազօրքի նախկին հրամանատար, այժմ Նիժեգօրօդեան դրագունների գնդի հրամանատար Հիւսէյին խան Նախիջևանսկին արժանացել է կայսրի և ապա Կայսրուհու ներկայութեանը ընդունվելու պատւին։ (Թէրքման)։

Բամբեկի ոճրագործութիւնները շարունակվում են քաղաքումս և տարածում են ահ ու սարսափ բնակիչների վրա։ Փետրվարի 13-ին, ուշ գիշերը, քաղաքիս 5-դ մասում գտնվող Սարաջեի քարվանսարայում, իր կացարանում խեղդում են Թիֆլիսի քաղաքացի Վարդանովին, 40 տարեկան հասակում։ Կասկածի ենթարկված մէկին, ասում են, տեղիս ոստիկանութիւնը ձերբակալել է, սակայն դեռ ոճրագործութեան շարժառիթները պարզված չեն։

Թիֆլիսի արհեստաւորների վարչութեան մէջ՝ սահմանած կանոնով արհեստաւորների գլուխ ընտրում են բոլոր համքարներից ընտրված մի մի պատգամաւոր և երկու երկու ներկայացուցիչ իւրաքանչիւր համքարից, այնպէս որ՝ բոլոր համքարների թիւը քաղաքումս 57 լինելով՝ ընտրողների թիւն էլ լինելու է 171 հոգի։ Դեռ անցեալ տարվայ յունիս ամսին լրացաւ ներկայ արհեստաւորների դասակարգի գլուխ Րաֆայելովի ընտրութեան լիազօրութիւնը և այն օրից մինչև այսօր, չնայելով որ մի քանի անգամ նրան այդ մասին յիշեցրել են—ընտրողների ժողով չէ նշանակում և նոր աւագի ընտրութիւնը յետաձգելով զանազան պատրւակներով—իրան թոյլ է տալիս ոստիկանական միջոցների դիմել—արհեստաւորներից՝ վարչութեան պահպանութեան ծախսերը պահանջելու և պակասած ժամանակ եւս իր ծառայողների ռոճիկների ու այլ ծախսերի համար ձեռք է տալիս անվերջ դրամագլուխ, որը առանձին նպատակի համար է նշանակած։ Ընտրութեան այս քաշքշուկը, ինչպէս իմանում ենք, արհեստաւոր դասակարգի շատերի կողմից բողոքի պատճառ է դարձած և տարաձայնութիւնները գնալով կարող են անախորժ ընթացք ստանալ։ Մէթէ պ. Րաֆայելովը չէ զգում իւրեւ դրութիւնը և պարտք չէ համարում ընտրութիւնը օր առաջ նշանակելով՝ նախապահպանել իրան և վարչութիւնը զանազան թիւրիմացութիւններից և տրտունջներից։

Ռուսիայի ֆինանսական դրութիւնը պարզելու համար՝ Պետերբուրգի պետական բանկում խորհրդակցութիւն է կատարվում, պետական բանկի բաժանմունքների բոլոր կառավարիչների մասնակցութեամբ։ Լսվում է որ խորհուրդը տխուր եզրակացութիւն է կազմել ֆինանսական ներկայ իրականութիւնից։

Այս օրերումս Թիֆլիսից Բագու պիտի գնայ մի յանձնաժողով ոստիկանութեան գործերը քննութեան ենթարկելու համար։ Այդ յանձնաժողովը պէտք է ծանօթանայ Բագուի ոստիկանական գործերին, որպէս զի վերակազմէ նոր ոստիկանական մարմինը։

Մեզ հաղորդում են, որ Պարսկաստանում մի քանի նոր գործեր, մանաւորապէս մետաքսի գործը բացվելու պատճառով, Կովկասում գտնվող պարսկաստանցի բանւորներից ցանկանում են իրանց հայրենիքը գնալ այնտեղ գործ ստանալու (?) համար։ (Հայաթ)

Թիֆլիսի ազնուականների գիմնազիոնի ուսուցիչ պ. Նաշվիլի թոյլտւութիւն է ստացել հրատարակելու Թիֆլիսում վրացերէն լեզուով ամենօրեայ մի թերթ «Ախալթաօրա» վերնագրով (Մատաղ Սերունդ)։

Ստացանք մի նոր գրքոյկ «Միևնոյն պագադում...» պատկեր Յ. Եսայեանի, բ. տպագրութիւն, Թիֆլիս, 1906 թ. գինն է 7 կոպէկ։ Այս պատկերը երիտասարդ գրողի աջողված պատմուածքներից մէկը կարելի է համարել։

Թիֆլիսի քաղաքային վարչութեան ընդունարանում կախված է ցուցակը Թիֆլիսի այն քաղաքացիների, որոնք ծնվել են 1884 թուի հոկտեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը 1885 թ. և որոնք ենթարկվում են զինւորագրութեան ներկայ 1906 թուին։ Թիֆլիսի այն քաղաքացիները, որոնք ծնվել են վերոյիշեալ ժամանակամիջոցում, բայց չեն մտել վերոյիշեալ ցուցակում, պարտաւոր են անմիջապէս յայտնել քաղաքային զինւորական ատեանին, որ մտցնէ իրանց անունները ցուցակում, ներկայացնելով միաժամանակ իրանց ծննդականները։

Պետերբուրգից տեղեկութիւն է ստացվել, որ Սրբազան սինոդը հարց է բարձրացրել էկզարխութիւնը վերացնելու մասին և հիմնելու Անդրկովկասում արքեպիսկոպոսութիւն և եպիսկոպոսութիւն։ (K.)

Անդրկովկասեան Շէյխ-ուլ-Իսլամի հիւանդութեան պատճառով, Փոխարքայի հրամանի համաձայն անդրկովկասեան հոգևոր վարչութեան նախագահի և Շէյխ-ուլ-Իսլամի պաշտօնավարութիւնը յանձնված է անդրկովկասեան շիաների հոգևոր վարչութեան անդամ Ախունդ-Աղաս-Ղուլի Սուլթան-Հիւսէյն-Բէգովին։ (K.)

Բորչալուի գաւառում, Աղթալա կայարանի մօտիկ գտնվող Մ. Արամեանցի կալուածում, փետրվարի 10-ին տասներկու զինված թուրք չարագործներ յարձակում գործեցին Արամեանցի պահապաններ՝ Շինող գիւղի բնակիչ Փարսադանովի և Տէր-Միքիքէթովի վրա։ Չարագործները կրակ բաց անելով նրանց վրա, աշխատում էին ներս խուժել Արամեանցի տունը, բայց պահապանները Արամեանցի միւս ծառաների օգնութեամբ դիմադրութիւն ցոյց տուին և փախցրին։ Հրացանաձգութեան ժամանակ յարձակվողներից երկու հոգի ծանր կերպով վիրաւորվեցին, որոնք ինչպէս պարզվեց, Այրում գիւղի բնակիչներ էին՝ Գիւլ-Մահմէդ-Հուսէյն օղլի և Փիրվերդի-Հասան օղլի։ (K.)

Պետերբուրգից տեղեկութիւն է ստացվել Թիֆլիսում, որ Կովկասի փոխարքայութեան հարցը վճռված է այն մտքով, որ փոխարքայութիւնը չի վերացվելու, ինչպէս այդ առաջ կարծում էին։ Վճռված է Կովկասի համար կազմել երեք գեներալ-նահանգապետութիւն, հիւսիսային, արևելեան և արևմտեան Կովկասի համար։ Յիշում են նոյնպէս ապագայ թեկնածուների անունները։ Իբրև թէ հիւսիսային Կովկասի համար նշանակված է իշխան Դ. Գօլիցին, արևելեանի համար (Բագուի, Երևանի և Գանձակի նահանգները) իշխան Կոչուբէյը, իսկ արևմտեանի համար (Քութայիսի նահանգը) դեռ ևս ընտրութիւն չէ կայացել։ Այդ գեներալ-նահանգապետութիւնները հաստատելուց յետոյ փոխարքայի առանձին օգնականների պաշտօնները կը վերացվեն։

Ստացանք պ. Աբրահամ Ամիրխանեանցի մի նոր աշխատութիւնը գերմաներէն «Der Koran, Eine Apologie des Evangeliums» (Ղուրանը, Ջատագովութիւն Աւետարանի)։ Գիրքը տպված է Գիւտէրսլօում, 1905 թուին։ Այդ աշխատութիւնը սահմանված է քրիստոնեայ ընթերցողների համար, որպէս զի նրանով կարողանան գնահատել Աւետարանը։

Ղազախի գաւառի նախկին գաւառապետ պ. Արնօլդը, նշանակված է Սղնախի գաւառապետ։

Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ նահանգապետը թոյլատրեց քաղաքային դումային հրապարակական նիստեր գումարել, առանց, իւրաքանչիւր առանձին անգամի համար թոյլտւութիւն խնդրելու, միայն թէ պէտք է վարվել գլխաւորից ուղարկված յունվարի 12-ի գրութեան համաձայն։

Ամսիս վերջերում Թիֆլիսում լոյս է տեսնելու ռուսերէն լեզուով ամենօրեայ մի թերթ «Впередъ» վերնագրով։

Բագուից «Нов. Обозр.» թերթին հաղորդում են, որ փետրվարի 12-ին քաղաքից կօզակներ ու հետևակ զօրքեր ուղարկվեցին մի գնդացիրով դէպի Բալլովի հրուանդանը, ուր բնակվում են նաւատորմի զօրամասերը։ Ուղարկված զօրքերը առանց դիմադրութեան հանդիպելու կալանաւորեցին կասպիական նաւատորմի նաւազների մի վաշտը, որոնք հրաժարվել էին կալանաւորել իրանց ընկերներից մի քանիսին։

Նոր հրատարակութիւններ։ Քութայիսի նահանգի ազնուական Վ. Ի. Շալիկաշվիլի խնդրամատոյց է եղել նահանգապետին, որ թոյլատրի իրան հրատարակելու Թիֆլիսում ամենօրեայ քաղաքական-տնտեսական և հասարակական-գրականական մի թերթ վրացերէն լեզվով «Խմա» (ձայն) անունով։ Բժիշկ Տ. Մ. Թադէոսեանը խնդրամատոյց է եղել նահանգապետին թոյլատրել իրան հրատարակելու Թիֆլիսում ամենօրեայ հասարակական-գրականական և տնտեսական հայերէն մի թերթ՝ «Ալիք» անունով։ Ազնուականուհի Շ. Ա. Դավիդօվան խնդրամատոյց է եղել նահանգապետին թոյլատրել իրան հրատարակելու Թիֆլիսում, իր ամուսին Շ. Ի. Դավիդօվայի խմբագրութեամբ, ամենօրեայ ոչ կուսակցական լրագիր ռուսերէն լեզվով «Кавказская Жизнь» անունով։

Երեկ, փետրվարի 15-ին, Թիֆլիսում բացվեց գիւղացիական բանկի բաժանմունքը։ Բացման ներկայ էին քաղաքագլուխը և զանազան հաստատութիւնների ներկայացուցիչներ։

Հայ աղէտեալների օգտին ստացանք. 1) Սարատովից—Աւագ Հախվերդեանի միջնորդով հաւաքած 100 ր., 2) Բագուից—բժ. Արտեմեանից 10 ր., 3) Սև Քաղաքից—Սահակ Մեսրոպեանի ամուսնութեան տասնամեակի առթիւ ժողոված 33 ր., 4) Նոր-Մարգելանից—Տուրկեստանեան 9-դ բատալիօնի հայ զինւորներից 5 ր. 15 կ., 5) Ախալցխայից—Ա. Մ. Սարգսեանից 5 ր., 6) Լենքօրանից—Եղիսաբէթ և Սերգէյ Թաթոսեաններից—նրանց որդի Նիկոլայի, իր ամուսնու և երկու զաւակներով, գիմնազիստ Ալ. Դիլազրեանցի և Եւգինէ Սարումեանի 1905 թ. փետրվարի Բագուի աղէտի անմեղ զոհերի տարեդարձին՝ հոգեհանգիստ կատարելու առթիւ 100 ր., 7) Մարթա Ջատիկեանից 20 ր., 8) Մամբրէ վարդապետից 10 ր., 9) Պետրոսեանից 2 ր. 80 կ., 10) Ն. Կուշնարեանից 10 ր., 11) Մ. Ասրիեանի քրոջ հարսանիքում հիւրերից Ա. Մխիթարեանի միջնորդով հաւաքած 22 ր., 12) Բերբերեանից, սիրողների ներկայացումից 25 ր., 13) Ս. Իսախանեանից 2 ր., 14) Ս. Տէր-Եղիազարեանից 10 ր., 15) Ալ. Ջանիբէգեանից 10 ր., 16) Զիտայից Յարութիւն Ղուկասեանի ձեռքով հանգանակած 101 ր., 17) Սիմէօն Եագուբեանից 10 ր., 18) Սիմֆերօպօլի կանանց բարեգործական խմբից Բուշնարեանի միջնորդով 100 րուբլի։

Յայտնի ռուս կին գրող Օ. Ռուսսօվայի գիրքը «Ազատ գիւղացիների երկրում» խորագրով, որը հրատարակել է «Донс. Рѣчь» լրագրի խմբագրութիւնը, 30,000 օրինակ կառավարութեան կարգադրութեամբ փետրվարի 2-ից գրաված են։

Ներկայումս լրագրների ասելով Պետերբուրգ են եկել ազնուականների կողմից պատգամաւորութիւններ։ Իրանց հաւաքվելու պատճառը այն է, որ ֆինանսների մինիստրը գաղտնի շրջաբերականով առաջարկել էր հարկանութեան տեսչներին շրջապայել ամեն տեղ և յորդորել կալուածատէրերին, որ գիւղացիների վրա էժան գներով վաճառեն իրանց պատկանեալ հողերը, որովհետև գարնան սպասվելիք ագրարային անկարգութիւնները և սրանց հետ կապված շահատակութիւնները կալուածատէրերի դէմ, զինւորական բաւարար ույժ չունենալով՝ անկարող կը լինի ամեն տեղ ճնշելու։

Տուկկում քաղաքի քաղաքագլուխ Կրիմանսը յափշտակել է քաղաքային գանձարանից 51,683 ր. և անյայտացել է։ Արտակարգ միջոցներ են ձեռք առնված ձերբակալելու նրան։

«Новости» լրագրի խմբագիր պ. Նոտովիչը ենթարկված է նոր քրէական պատասխանատւութեան։ Իր նոր մեղքը այն է եղել, որ իր խմբագրութեամբ հրատարակվող լրագրում տպագրել է Թուրք-հայկական ժողովի վճիռը, որը տեղի ունեցաւ Պետերբուրգում։ Մամուլի գլխաւոր վարչութիւնը ենթարկել է պ. Նոտովիչին պատասխանատւութեան պատժական օրէնքի 129 յօդ. 1. կէտի հիման վրա (ապստամբութեան կամ դաւաճանական գործի գրգռում)։

Ներքին գործերի մինիստրը այս տարվայ սկզբից $2^1/_2$ միլիօն նոր կրեդիտ էր յատկացրել ոստիկանութեան համար։ Փետրվարի 7-ից պետական խորհրդի ընդհանուր ժողովում, մայրաքաղաքի լրագիրների ասելով, որոշված է նոր լրացուցիչ ծախս այդ նպատակի համար 3 միլիօն։

Սկսվում են խմբական աքսորները։ Սլաւոնական կայսեր կրթարանի տեսչուհի Անդրէեվսկին աւելորդ խօսակցութիւնների և վնասակար մտքերի համար աքսորված է Վօլօգօդեի նահանգը։ Աքսորվում է նոյնպէս առեւտրական նաւատորմի նաւաստիների համառուսական միութեան նախագահ Կրիվօխօգին։

Պատերազմից վերադարձած բժիշկ Բօգօմօլեցը զինւորական դատարանի է ենթարկվում միտինգների մասնակցելու պատճառով։ Կալանաւորութիւնների շնորհիւ, գաւառի ամենախուլ գիւղերը զրկված են բժիշկներից։ Կալանաւորվում են ամեն հեղինակաւոր գիւղացիները, թեկնածու-ընտրողները։

Նովօրօսիյսկի համալսարանի ազատամիտ և րէակցիօներ պրոֆեսորների մէջ կատարվող խուլ պայքարը պատճառ եղաւ բժշկական ֆակուլտետի անկմանը։ Րէակցիօներները պահանջում էին պաշտօնից հեռացնել պրոֆեսոր Շչէգօլօվի երկու օգնականներին. դեկան ընդդիմացաւ այդ միակողմանի վճռին, և իննը պրոֆեսոր-րէակցիօներներ նիստը թողնելով դուրս գնացին և մի կոլլեկտիվ նամակ գրեցին դեկանին, որի մէջ յայտնում են, որ նիստերին չեն յաճախելու։ Ճեմարանական միութիւնը, արտայայտելով հեռացողներին յանդիմանութիւն, իր կողմից արտաքսեց րէակցիօներ Կորշին և Մանկօվսկուն։

Օդեսսայի բանտը լցվել է քաղաքական յանցաւորներով։ Կալանաւորվածների թւում կան մի քանի սպաներ և շատ զինւորներ։

Բերլինի «Լոկալ Անցայգեր» լրագրի ասելով վերջին ժամանակներս Պետերբուրգում ձերբակալվել են 13 անձինք, որոնք իբրև թէ մտադիր են եղել կոմս Վիտտէի դէմ մահվան փորձ անելու։

Կազանի մեր թղթակիցը մեզ հաղորդում է, որ Կազանում պ. Զաքիր Թահիրօվ «Հուրրիէթ»—Ազատութիւն—անունով մի օրաթերթ է հրատարակելու։ (Իրշադ)։

Փետրվարի սկզբներից պ. Մօհամէդ Ֆաթիհ ու Քէրիմը Օրէնբուրգում սկսել է հրատարակել «Վակթ»—Ժամանակ—անունով թուրքերէն մի լրագիր։ (Իրշադ)

Յունվարի 31-ին Մոսկվայում կայացաւ ընտրողական ոչ-կուսակցական մի մեծ ժողով, որի մէջ սօցիալ-դէմօկրատները գերակշռող էին հանդիսանում։ Քննվում էր Պետական Դումայի ընտրութիւններին վերաբերվելու հարցը։ Ժողովում տարաձայնութիւն ծագեց սօցիալ-դէմօկրատական կուսակցութեան երկու խմբերի մէջ՝ մեծամասնականների ու փոքրամասնականների։ Առաջին խմբի, այսինքն մեծամասնականների ճառախօսները այն միտքն էին յայտնում, որ Պետական Դումայի ընտրութիւններից հարկաւոր է օգուտ քաղել կուսակցական պրօպագանդայի շահերի տեսակէտից, իսկ Պետական Դումա գնալու հարկ չը կայ և ընդհակառակը, առանց խտրութիւն դնելու միջոցների մէջ, ամեն կերպ պէտք է աշխատել արգելք լինել նրա իրագործմանը։ Միւս խումբը՝ փոքրամասնականները մատնացոյց էին անում այն հանգամանքի վրա, որ ամեն տեսակ տեռօրական գործողութիւնները հակառակ են սօցիալ-դէմօկրատական ուսմունքի ոգուն, որ այդ տեսակ միջոցներով կարելի է միայն ահաբեկել ժողովրդական մասսային, որը դրա ազդեցութեան տակ էլ կը յարէ ազատամիտ բուրժուազական կուսակցութիւններին։ (Н. Ж)

«Вечерн. Голосъ» լրագիրը հաղորդում է, որ Ցարսկոէ-Սելօում հասկացնել տալիս Վիտտէին, որ ժամանակ է փոխել քաղաքականութիւնը։ Նոր հովերը կարտայայտվեն ի միջի այլոց նրանում, որ մեծ փոփոխութիւններ տեղի կունենան պալատական կենտրում և նրան շրջապատող շրջանի մէջ։

Պետերբուրգից «Ցնօբիս Փուրցելի» թերթին հեռագրում են. «Բանտային գլխաւոր վարչութեան տեղեկութիւնների հիման վրա, Ներկայումս բանտերում կալանաւորված են 72 հազար քաղաքական յանցաւորներ։ Արդէն 17 նահանգապետներ տեղեկագրել են, որ տեղական բոլոր բանտերը լիքն են քաղաքական յանցաւորներով։ Ծառայութիւնից արտաքսված են 200 ծովային սպաներ։—Պարիզից հաղորդում են, որ այնտեղի ֆինանսական շրջաններում հայր Գապօնը ռուսաց փոխառութեան յաջողութեան համար հող է պատրաստում։ Լրագիրները Գապօնին անուանում են Վիտտէի գործակալը։

Ռուսական ուսանողների Լիէժի փոխադարձ դրամարկղին կից հիմնված աշխատանքի բիւրօն խնդրում է յայտարարել, որ նա մեծ յօժարութեամբ տալիս է հարկաւոր տեղեկութիւններ Բէլգիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի և Զուիցերիայի բարձրագոյն ուսումնարանների մասին, մի և նոյն ժամանակ հաղորդում է ապրուստի միջնակարգ արժողութեան մասին Բէլգիայում, Պարիզում, Բերլինում և Լօզանում։ Լիէժ եկողները (Լիէուսիկ) կարող են օգուտ քաղել բիւրօյի ծառայութիւններից բնակարան վարձելու համար և այլն։ Տեղեկութիւնների համար դիմելիս խնդրում են նամակի հետ ուղարկել երեք կամ չորս 10 կոպէկանոց նամականիշներ։ Հասցէն. Բէլգիա, Liége, Société russe de secours mutuels, Quai de la Boverie 53.

«Русь» լրագր'ն ուղարկել են ատաման գեներալ-մայոր Օլէնչէվի երկու հրամանը, որ նա տուել է Կուբանի կազակների զօրքին։ Բերում ենք նրանցից հետևեալ կտորները։ Հրաման յունվարի 2-ից. «Սրբութեամբ, շիտակութեամբ, հաւատարմութեամբ և անդաւաճան կերպով են ծառայել միշտ Կուբանի կազակները, և դեռ ևս դէպք չէ եղած, որ նրանք մերժէին գնալ այնտեղ, ուր կոչում էր նրանց վեհապետի կամքը։ Դէպք չէ եղել, որ նրանք մոռանային թէ խիղճը, թէ պատիւը թէ պապերի պատուիրանները, թէ իրանց պարտաւորութիւնը Թագաւորի կամքի առաջ, Թանկագին հայրենիքի առաջ։ Անդորրութիւն և հանգստութիւն վերականգնելու համար պետութեան ներսում, անկարգութիւնների առաջն առնելու և դադարեցնելու համար, խաղաղ քաղաքացիներին կամայականութիւնից, բռնութիւնից և կողոպուտից պաշտպանելու համար ծառայութեան կանչվեցին կազակները։ Պէտք է կարծել, որ Կուբանի կազակները պէտք է հասկանային այդ, սակայն չարամիտ մարդիկ,—պետութեան ներքին թշնամիները,—միայն իրանց անձնական նպատակներին ծառայեցնելով ժողովրդական բարօրութեան մասին հոգալու դիմակով զանազան ճանապարհներով կարողացան իրանց նպատակին հասնել, այն է, որ պլաստունների 14, 15 և 17-դ բատալիօնները, նոյնպէս և 2-դ Ուրուպեան գնդի մի մասը, որը զէնքի էր կանչված պլաստուններից առաջ, մոռացան և խիղճ և պատիւ, և պապերի աւանդները, և իրանց սուրբ պարտքը Թագաւորի կամքի և Թանկագին, բազմաչարչար հայրենիք Ռուսաստանի առաջ։ 14-րդ բատալիօնը դեկտեմբերի 3-ին Անդրկովկաս ուղարկվելով և երկաթուղիով մինչև Եւլախ կայարանը հասնելով, հրաժարվեց գնալ նրա համար նշանակված կէտերը և Ելիսաւետպօլի գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ դեկտեմբերի 18-ին վերադարձվեց Մայկօպ քաղաքը, որպէս անկարգ դրութեան մէջ գտնվող զօրամաս։ 15-դ բատալիօնը, հասնելով մինչև Կրիմսկայա կայարանը դեկտեմբերի 12-ին, հրաժարվեց գնալ Նովօրօսիյսկ փոխադրելու նաւ նստելու և Բաթումում գնալով մեր զօրքերին ազատելու համար և այդ պատճառով իմ կարգադրութեամբ դեկտեմբերի 17-ին վերադարձվեց Սլավեանսկայա ստանիցան։ 17-րդ բատալիօնը, որը Բաթում գնալու հրաման ունէր ստացած նոյեմբերի 28-ին, Նովօրօսիյսկ գալով հրաժարվեց նաւը նստելուց և Չէրնօմօրեան նահանգապետի հրամանով դեկտեմբերի 13-ին վերադարձվեց Ումանսկայա կայարանը։ 2-դ Ուրուպեան գնդի կազակները, բացի 2-դ զօրամասից և նրա 4-րդ հարիւրեակից, թողեցին ծառայութիւնը և ինքնակամ գնացին իրանց ստանիցաները։ Դրդված յեղափոխականներից 6-դ զօրամասը և 4-դ հարիւրեակի զօրամասերը թողեցին իրանց պաշտպանութեան յանձնված Նովօրօսիյսկը, եկան Եկատերինօդար, որտեղից 1-ին 3-դ և 5-րդ հարիւրեակների հետ միասին, չը նայելով իշխանութեան յորդորներին, առանց օֆիցէրների դեկտեմբերի 23-ին ճանապարհ ընկան Եկատերինօդարից Ուստլաբու երկաթուղիով, դիմելով դրա համար երկաթուղիական սպասաւորների օգնութեամբ եկան Մայկօպ, վերցնելով իրանց հետ գնդի դրօշակը և դրամարկղը։ Իմ զեկուցման զինւորական մինիստրին պլաստունների վարմունքի մասին, Նորին բարձր գերազանցութիւնը հաղորդեց ինձ հեռագրով դեկտեմբերի 23-ից հետևեալը. «Ձեր զեկուցած ամենահպատակ հեռագրի վրա Թագաւոր կայսրը բարեհաճեց իր սեփական ձեռքով գրել. «Չէի սպասում, որ պլաստունները կարող են պրօպագանդայի ենթարկվել։ Յայտնել 14, 15 և 17-դ բատալիօնների պլաստուններին, որ նրանք արատաւորեցին իրանց՝ Իմ աչքում։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Փետրվարի լոյս 14-ի գիշերը Հաջիբաբա Գաբրիէլեանցի թէյատանը, որը գտնվում է Մետեխսկի փող. վրա Խուլքաղաքատակ Բաղրատ Արմավեանը ուզում էր սպանել Գաբրիէլեանցին, բայց 7-րդ քաղաքամասի ոստիկանութիւնը նրան ձերբակալեց և նրա տունը խուզարկելու ժամանակ նրա բնակարանում գտաւ մի բրաունինգ. ձերբակալվածը դատի է ենթարկված։

Փետրվարի 14-ին 5-րդ քաղաքամասի ոստիկանատուն մտաւ Սարաջեի քարվանսարայի ծառայ Գ. Մուզաշվիլին և յայտնեց, որ առաւօտեան, քարվանսարան կարգի բերելու ժամանակ նա նկատեց, որ Սղնախի բնակիչ Համայեակ Վարդանեանի պատկանող բնակարանի դուռը բաց է, և երբ նա մտաւ բնակարանը, տեսաւ որ Վարդանեանը պառկած է անկողնում խեղդված. կասկածը այդ սպանութեան մէջ յայտնվում է Թիֆլիսի բնակիչ Թոմաս Եարդուեանի վրա, որը ձերբակալված է։

Թիֆլիսի 2-րդ կարգի վաճառական Գրիգոր Դիզգալուբովի բնակարանի վրա փետրվարի 1-ին յարձակվելու և նրան վիրաւորելու մէջ կասկածվողը, որը բոլորն անյայտացել էր, շնորհիւ 9-րդ քաղաքամասի օկոլօդօչնի վերակացու Տիրանովի ձեռք առած խիստ միջոցներին ձերբակալված է Բորչալուի գաւառում և ուղարկված է քննիչին, իսկ վերջինս նրան բանտարկել է։ Ինչպէս յետոյ պարզվեց նա Բորչալուի գաւ. Գերգեր գիւղի բնակիչ Արամ Աղաջանեան Տէր-Սարգսեանն է։ Այդ միևնոյն օկօլօդօչնին ձերբակալել է նաև Տէր-Սարգսեանի մասնակից Քութայիսի բնակիչ Մալաքի Կիզվալիձէին, որը նոյնպէս բանտարկված է։

Փետրվարի 14-ին երեկոյեան ժամը 9-ին Սօլդատսկի բազարի վրա էլեկտրաքարշի վագոնի տակ, յայտնի չէ թէ ով դրել էր պետարդա, որը պայթեց. բայց ոչ մի վնաս չը պատճառեց։

Փետրվարի 14-ին առաւօտեան ժամը 10-ին Բէլի Կլիւչի բնակիչ Գէօրգ Կարումովը մտաւ Ալեքսանդր Գանջալեանի մանրածախի խանութը (Պեսկովսկի փող. տուն Խնֆիաձեանցի) և գողացաւ 1 գլուխ շաքար և ուզում էր անյայտանալ, բայց տերն ու տեղը ձերբակալեցին նրան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼՕ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ ԼՕՆԴՕՆՈՒՄ

Անցեալ շաբաթ իրիկուն, Յուն. 20, Անգլո-հայկական գեղեցիկ հանդէս մը տեղի ունեցաւ Պիգգաւօրրի Վիքթօրիա Հօլին մէջ։ Վերապ. Մալքօլմ Մաքքօլ, հեղինակ «Անգլիոյ Պատասխանատւութիւնը Հայաստանի հանդէպ» գեղեցիկ աշխատութեան, ծանր հիւանդութեան մը պատճառաւ անկարող եղաւ նախագահելու հանդէսին։ Հակառակ աննպաստ պայմաններուն՝ 3—4 հարիւրի չափ երեխու բազմութիւն մը փութացեր էր աթոռները գրաւելու, մեծ մասամբ անգլիացի ազդեցիկ անձնաւորութիւններ։

Օր. Զապէլ Պօյաճեան—ծանօթ նկարչուհի և հեղինակ քանի մը հայկական կեանքէ առնուած անգլիերէն վէպերու—բացաւ հանդէսը՝ հակիրճ բացատրութիւններով։ Տէյլի Նիւզի խմբագրական մարմնին՝ կեղծ անուամբ Տիկին Ալիսիա՝ շատ գնահատելի ճառ մը խօսեցաւ հայերու մասին։ Երգուեցան շատ մը կտորներ՝ Լօնտօնի յայտնի թատերգականներէ և արուեստագէտներէ՝ որոնց գլխաւոր աստղը հանդիսացան Պր. և Տիկին Մարթէն Վան-Լէնեփ, յայտնի հայասէր զոյգը՝ իրենց կողմէ մինքան զմայլելի կերպով երգուած «Իմ սիրելի զաւակներս» հայերէն երգով, որուն համար բուռն ծափահարութիւններու արժանացան։

«Հայաստանի վերաշինութիւնը» հանդէսին երկրորդ մասը կը կազմէր. բաւական պատմութիւններ տեսնուած էր նիւթը իր տպաւորութիւնը պահելու համար։ Օր. Պօյաճեան նկարած էր Մասիս լեռը և աւերակներ ներկայացնող մեծադիր վարագոյր մը, և աստուածային կամ գեղ հագուստներ հայթայթուած էին նախօրօք։

Հանդիսականներու ուշն ու հետաքրքրութիւնը թատերաբեմն էր։ Ու անձայն յամրօրէն կըսկսի բարձրանալ վարագոյրը և մեզի պատկերացնել բեմին վրա գեղանի կին մը՝ ծածկուած սև շղարշով մը, որ կը շրջէր հայկական աւերակներու մէջ։ Հեռուն, Մասիսի ձիւնապատ գագաթը իր կոյս վեհութեամբ կերևէր։

«Հայաստանի վրա շինութեան ոգին»—Օր. Պօյաճեան—կը չափէր գետինը մեն մինակ, լուռ և խորհրդաւոր։ Յանկարծ յայտնուեցան յաջորդաբար՝ կրօնքը, մտաւորական կեանքը, ձեռնարուեստական կեանքը, նոր շինութեան հիմնաքարը, մեռելային կամ խաւարի կեանքը խորհրդանշող հերոսներ՝ առանձին առանձին տարազներով՝ որոնց ամէնքն ալ ներկայացնելով իրենց հիմնաքարերը՝ կը վիճէին, կը թուէին իրենց առաւելութիւնները և կը պնդէր անոնցմէ իւրաքանչիւրը թէ՝ ինք իրաւունք ունի «Հայաստանի նորոգ շինութեան» հիմնաքարը ըլլալու։

Վիճաբանութեան պահուն՝ վրա հասաւ Հերմէսը և հետևեալ պատգամը տուաւ.

«Ձեր ձայնը հասաւ մինչև երկինք, աստուածները վար իջան և Արարատի գագաթին վրա ատեան կազմեցին. հիմա պիտի երևան գայ Աթենասը և կարգադրէ ձեր վէճը»...

Ու յայտնուեցաւ Աթենասը (Միս Կրէյսի Օ'Մալէ) և անգլիական հնչումներով արտասանեց. «Դուք, դառնալով դէպի ծերունիները, դատապարտուած էք յաւիտենական կորուստի, իսկ դուք, դէպի չորս հերոսները, չորեքանգ միմեանց եղբայր էք և ձեր չորս քարերը պիտի դրուին շինութեան չորս անկիւններում»... Բեմը շարժուեցաւ, չորս հերոսները ձեռք ձեռքի տուին և սկսան երգել՝ «Ի բիւր ձայնից բնութեան շքեղ» իր պաշտելի յանկերգով.

Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն։

Վարագոյրը սկսաւ ծանր վար իջնալ և թատրոնը որոտաց ծափահարութիւններով։

Ներկայացումէն ետքը՝ յաջորդաբար խօսեցան և իրենց շնորհակալութիւնները յայտնեցին՝ Տր. Տօլրաշեան, Պր. Կ. Յակոբեան, Պր. Կ. Թումանեան, Տիկին Աննա Րաֆֆի, Պր. Արամ Րաֆֆի են։

«Նաւաղ»-ի պարէն և երգէ մը ետք հանդէսը վերջացաւ։

Լօնտօնեան կարևոր թերթերը արձանագրեցին գաղութիս այս հանդէսը, մանաւանդ Փէնզիբէրըն Նիւզ տեղական թերթը շատ գովված էր դերակատարներէն գլխաւորները և մասնաւորապէս Միս Կրէյսի Օ'Մալէ, որ հակառակ իր «Իռլանտացիի մը ըլլալուն, արտասանութեամբ անխտիր միայն անգլիացիններէ»։

Տէյլի Նիւզ-ի խմբագիրներէն Պ. Տօու, նամակով մը կառաջարկէ Հ. Միացեալ Ընկերութեան նախագահին՝ Պ. Արամ Րաֆֆիի՝ որ այս «ուրուագիրը» անգլիական թատրոններու մէջ ներկայացուի, աւելցնելով որ՝ «ամբողջութեամբ գեղարուեստական գործ մըն էր...։ Լայն ասպարէզ կայ զայն ներկայացնելու թատերաբեմի վրայ և լաւագոյն միջոցը պիտի ըլլայ Հայաստանի դատը առաջ բերելու, մանաւանդ «Հայաստանի շինութեան ոգին» շրջելով աւերակներու մէջէն՝ ժողովրդական համակրութիւնը և երևակայութիւնը պիտի կոչէր»։

Ջերմապէս շնորհաւորելու է հանդէսին կազմակերպիչները իրենց յաջողութեան համար, մանաւանդ երբ աչքի առջև ունենանք տրուած զոհողութիւններն ու ջանքերը։ Րաֆֆիի ընտանիքը բացի իր հրատարակչական գործէն, ինչ որ գնահատելի է, Լօնտօն հաստատուելէն իվեր՝ միշտ վառ պահելու աշխատած է գաղութիս ազգայնական ոգին, և ջիղը եղած է ամէն կարգի ազգային ձեռնարկներու։

Լօնտօնի Հայոց Միացեալ Ընկերութեան Վարչութիւնը՝ գիտակից իր ուժին՝ պիտի աշխատի յառաջիկային շարք մը հանդէսներով և ժողովներով օժանդակել հայանպաստ շարժումին։ («Ռազմիկ»)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պօլիս, 7 (20) փետրվարի։ Դէ-Ջիօրջիս փաշան Մակեդոնիայում թիւրքաց կառավարութեան ծառայութեան մէջ գտնվող օտարերկրացի սպաներից ժողով գումարեց խորհրդակցելու այն բոլոր հարցերի մասին, որոնք կապ ունեն նրանց ապագայ գործունէութեան հետ Մակեդոնիայում։ Խորհրդակցելուց յետոյ, հետևեալ որոշումը կայացրին, որ ամբողջապէս տրացիայի գործունէութեան յաջողութեան համար հարկաւոր է պահանջել Բ. Դռնից, 1) օտարերկրացի սպաների թիւը աւելացնել, 2) տեղական իշխանութիւնները պէտք է ի նկատի առնեն սպաների զեկուցումները, 3) վերապահել օտարերկրացի սպաներին հրամաններ տալու իրաւունք։ Դիպլօմատիական շրջաններում համոզված են, որ այդ պահանջները Հիլմի փաշան կը մերժէ։

Ֆրանսիա։ Փետրվարի 7/20-ին կայացաւ Պարիզում մինիստրների խորհրդի նիստը հանրապետութեան նոր նախագահ Ֆալիէրի նախագահութեամբ։ Նախագահը ցանկութիւն յայտնեց, որ կառավարութեան միահամուռ աշխատութիւնը իրան հետ, բախտաւոր լինի Ֆրանսիայի և հանրապետութեան համար։ Ապա նա կարդաց այն գրութիւնը, որ այդ օր պէտք է կարդացվէր պարլամենտում։

—Ընտրութիւնները պարլամենտի համար նշանակված են ապրիլի 16-ին, իսկ կրկնաքուէարկութիւնները՝ 30-ին։ Նախկին նահանգապետ Լուբէին նշանակված է երկրագործութեան մինիստրութեան բարձր խորհրդի մշտական կոմիսիայի անդամ։

—Ֆինանսների մինիստր Մէրլուն յայտնեց, որ կենսաթոշակների համար նոր օրէնքի գործադրութիւնը մօտ 270 միլիօն ֆրանկ ծախք կը պահանջէ առաջին 10 տարվայ ընթացքում, իսկ 150 միլիօն՝ երկրորդ տասնամեայ շրջանում։

—Պարլամենտի ընտրութիւնների մօտ լինելը հետզհետէ պարզում է կուսակցութիւնների վիճակը երկրում։ Կռիւը, ըստ երևոյթին, կը կենտրօնանայ և հակակղերական և հակամիլիտարական ծրագիր ունեցող սօցիալիստների և չափաւոր հանրապետականների մէջ։ Կասկածելի է թւում արմատականների աջողութիւնը իրանց անորոշ ծրագրով, որ փոխ է առնված մասամբ սօցիալիստներից, մասամբ պրոգրէսիստներից։ Ինչ վերաբերում է կղերականներին և նացիօնալիստներին, դժուար թէ որ և աջողութիւն ունենան նրանք, որովհետև հասարակութիւնը շատ անտարբեր է դէպի նրանց գործունէութիւնը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

13 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 փետրվարի։ Դիտաւորութիւն կայ աւելացնել Պետերբուրգի, Վարշավայի, Վօրօնէժի, Խարկօվի, Մոսկվայի, Կամիլինսկի, Տամբօվի և Ուրալեան երկաթուղիների ժանդարմական ոստիկանութեան կազմը։ Ներքին գործերի մինիստրը առաջարկեց Պետական խորհրդին՝ լրացնելու 1892 թ. քաղաքային օրէնսգրքի 45-րդ յօդուածը մի նկատառութեամբ, որով մինիստրին իրաւունք է տրվում քաղաքային վարչութիւնների միջնորդութեան համաձայն, ընտրութիւնները կատարել թերթիկներով. տուողները անձամբ մատուցանում են ընտրողական ժողովների նախագահներին։ Ցուցակներում նշանակվում են ձայների աւելի շատ թիւ ստացողների անունները։ Ձայների հաւասարութեան դէպքում ընտրութիւնը որոշվում է վիճակով։ Այս առաջարկութիւնը քննվելու է Պետական Խորհրդում փետրվարի 18-ին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 փետրվարի։ Մամուլի գործերի գլխաւոր վարչութեան անդամ Ադիկաեվսկին, ժողովրդական լուսաւորութեան մինիստրի խորհրդի անդամ Բարանովը և պարսից արքունիքի մօտ դեսպան և լիազօր մինիստր Շպէյէրը արձակվում են պաշտօններից իրանց խնդրագրերի համաձայն։

ԲԵՐԼԻՆ, 12 փետրվարի։ Պալատում ընդունելութեան ժամանակ պրինց Ալբերտը շնորհաւորեց նաւատորմի կողմից—կայսերական զոյգի արծաթեայ հարսանիքի տօնը, նոյնպէս կայսրի որդու պսակադրութիւնը։ Վիլհէլմը պատասխանեց մի ճառով, որի մէջ ցոյց տուեց, որ պրինց Ալբերտը մարմնացնում է իր մէջ կայսրութեան յարութեան փառաւոր ժամանակը։ Ցամաքային և ծովային ռազմիկ ույժերը—շարունակեց կայսրը,—իմ առաջին և վերջին մտածմունքներն են, իսկ Թագուհին շարունակ ձգտում է թեթևացնելու կարիքները և հիւանդութիւնները։ Աստուած տայ, որ պատերազմի պատճառ երևան չը գայ, բայց—եթէ լինի, ես լիովին համոզված եմ որ զօրքը ցոյց կը տայ իր ույժը, ինչպէս 35 տարի առաջ»։

ՊԵԿԻՆ, 12 փետրվարի։ Ի նկատի ունենալով, թէ անկարգութիւններ կարող են ծագել փետրվ. 11-ին, ձեռք են առնված զգուշութեան առանձին միջոցներ։ Ոստիկանութեան բարձր ներկայացուցիչները և պաշտօնեաները անակնկալ կերպով կանչվեցին պալատ։ Խորհրդակցութիւնից յետոյ քաղաքի փակված մասի շուրջը հսկող պահակախմբի թիւը կրկնապատկվեց, զօրքը շարվեց այն շինութիւնների մօտ, որտեղ ապրում են կառավարչական բարձր ներկայացուցիչները։ Սակայն քաղաքում բոլորովին հանգիստ էր, ոչ մի անկարգութիւն չը կար։

ԻՐԿՈՒՏՍԿ, 12 փետրվարի։ Լինեվիչը ժամանեց։

ԼԻԲԱՎԱ, 12 փետրվարի։ Սպասվում է Հեռաւոր Արևելքից «Աւրօրա» նաւը։

ՊԼՕԻՆՍԿ, 12 փետրվարի։ Կայացան զանազան կուսակցութիւնների քրիստոնեաների նախընտրական ժողովները։ Հրէաները—որ կազմում են քաղաքի ազգաբնակութեան $^3/_4$ մասը, առանձին են խորհրդակցում։

ԲԵՐԼԻՆ, 12 փետրվարի։ Փետրվ. 12-ին պատգամաւորութիւնների կողմից կայսերական զոյգին բարեգործական նպատակով յանձնված ամբողջ գումարն է $2^1/_2$ միլ. մարկ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ 12 փետրվարի։ Թիֆլիսի դատաստանական պալատի քննիչ Ալեքսանդր-Դօլինկօվը նշանակվում է Մոսկվայի դատաստանական պալատի քննիչ։

14 փետրվարի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 փետրվարի։ Արդարադատութեան մինիստրութեան գլխաւոր խորհրդական Վերէվկինը նշանակված է արդարադատութեան մինիստրութեան առաջին բաժնի վերատեսուչի պաշտօնակատար։

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 13 փետրվարի։ Քաղաքային վարչութեան շաբաթ օրվայ նիստում ոստիկանութեան նախագահ Բուդնայիին, քաղաքային վարչութեան քաղաքապետի երեք-չորս անդամների և շատ ոստիկանների ներկայութեամբ միայն կարդաց արքայական խիստ գրութիւնը, որ քննադատում էր քաղաքային վարչութեան դէպի կառավարութիւնն ունեցած գործողութեան ձևը, և յայտնում էր թէ՝ այն անօգուտ փորձերի պատճառով՝ որի նպատակն էր քաղաքային ներկայացուցչական գործունէութիւնը դէպի անդունդ տանել, արքայական իշխանութեան վերաբերմամբ,— կայսրը Բուդնային նշանակում է Բուդապեշտի արքայական կոմիսար, չը սահմանափակելով նրա իրաւունքը՝ փակել քաղաքապետութեան և բոլոր յանձնաժողովների նիստերը, օգտուել ընդհանուր ժողովների բոլոր իրաւունքներով, փոխել քաղաքային ծառայողներին, անհնազանդների գործողութեան համար քննութիւն նշանակել, վերջնականապէս փոխարինել նրանց պաշտօնները ուրիշներով: Դրանից յետոյ Բուդնան և ոստիկանները հեռացան: Հինգ րոպէից յետոյ ժողովը վերսկսուեց գրութեան կարդալու ժամանակ բացակայողների ներկայութեամբ: Միաձայն ընդունուած է փոխ-քաղաքապետի առաջարկութիւնը, որ սահմանները է որոշում արքայական իշխանութեան և ասում է թէ՝ արքայական լիազօր կոմիսարը իրաւունք չունի գրաւել հայրենի-կառավարութեան իշխանութիւնը: Անիրաւացի տեղ պարլամենտի արձակելը և լիազօր կոմիսարների նշանակելը՝ սահմանադրութեան կանգ առնելու նշաններն են: Քաղաքային ինքնավարութիւնը բողոքում է վերջինիս դադարեցման դէմ, կոմիսարի հրամանները համարում է անկատար և անպարտադիր, պատւիրում է արքայի դէպի իր հաւատարիմ ունգարական ազգը ունեցած սիրոյն և ազգի միահամուռ աշխատութեան՝ սահմանադիր Ունգարիայի օգտի և նրա ժողովրդների բախտաւորման համար:

ՉԻՏԱ, 13 փետրվարի: Ձերբակալուած են «Բայկալ»-ի խմբագիրը, տպարանատէրը, լրագրի մի աշխատակից, գիւղական տանուտէրը և երկու ուսուցիչ: Տպարանը կնքուած է:

ՄԻՆՍԿ, 13 փետրվարի: Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցող նահանգների ցուցակները կը հրատարակուին մինչև փետրվարի 25-ը:

ԹԷՕԴՕՍԻԱ, 13 փետրվարի: Այսօր ժանդարմիական վարչութեան հրամանով ազատ են թողնուած, Եալտայում անցեալ շաբաթ ձերբակալուած և Թէօդօսիայի բերդում բանտարկուած դէմստվային վարչութեան անդամ Եարցեվը և սանիտարական բժիշկ Բօգանովը ու Սալարիկովսկին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 փետրվարի: Բարձրագոյն հրամանով Պետական Դումայի բացման օրը նշանակուած է ապրիլի 27:

ՄԱԿՕՆ, (Սոն և Լուար գաւառ:) Այստեղ ներքին գործերի մինիստր Դիւբիէֆը իր ճառի մէջ նկատեց, որ կառավարութիւնը կը մտցնի եկեղեցին պետութիւնից բաժանման օրէնքը չը նայելով այն յամառ ընդդիմադրութեան, որին հրաւիրում է պապի կոնդակը: Կառավարութեան պաշտօնեաներին ցոյց տուած ընդդիմադրութիւնը երևան է գալիս, որպէս մի ակտ կաթոլիկների զգացման, որոնք խաբուեցին պարլամենտական ընտրութիւնների նախընթաց օրը, յօդուտ միապետական կուսակցութեան: Իսկ ինչ վերաբերում է տնտեսական հարցերին, անհրաժեշտ է մտածել, որ ֆրանսիական մթերքները աւելի շատ օգտուեն և տարածուեն գտնեն գլխաւորապէս ֆրանսիական գինին, նոյնպէս կապել նոր առևտրական դաշնագրութիւններ, Ռուսաստանի և Շվէյցարիայի հետ կապած դաշինքի նման: Վերջում մինիստրը իր համոզմունքը յայտնեց, որ երկիրը խաղաղութիւն է կամենում, իր ազգային արժանապատուութեան և անկախութեան երաշխաւորման պայմաններով:

ՌՈՄՆԻ 13 փետրվարի: Ոստիկանապետը առաջարկում է առանց իրաւունքի զէնք ունեցող բնակիչներին ոստիկանութեան յանձնել իրանց զէնքերը: Խստութեամբ պահպանւում է քաղաքին կից տեղը. խուլիգանութիւններ են կատարուած ռէալական դպրոցից արձակուած մի քանի աշակերտների մօտ. քաղաքում և գաւառում հանգստութիւն է տիրում: Մի քանի գիւղերում արդէն ընտրուած են Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցելու համար լիազօրներ:

ՌԻԳԱ, 13 փետրվարի: Ժամանեց ծովային մինիստրը և, տեսնելով նաւատորմի միացեալ երրորդ զօրախումբը, որ կազմուած էր անկարգութիւնները ճնշելու, մեկնեց դէպի Լիբաւա:

ՏՎԵՐ, 13 փետրվարի: Մորոզովի գործարանը, որ փակուած էր բանուորների դէմ 12-ի գործադուլի ժամանակ, այսօր կրկին բացուեց:

ԲԵՐԼԻՆ, 13 փետրվարի: (Վոլֆ): Գործադուլ արին Բերլինի կառապանների մեծ մասը փողոցներում համարեա չկան կառքեր:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 փետրվարի: Պաշտօնական: Բարձրագոյն Ուկազներ Սենատին. առաջին. ի նկատի ունենալով, որ շատ նահանգներում ընտրութիւնների ցուցակներ կազմելու նախապատրաստական աշխատանքները շուտով պէտք է աւարտուին և ներկայումս արդէն պարզւում է Պետական Դումայի անդամների ընտրութիւններ կատարելու հնարաւորութիւնը, հրամայում ենք նշանակել Պետական Դումայի գումարումը 1906 թ. ապրիլի 27-ին». ստորագրուած է ՆԻԿՈԼԱՅ. փետրվարի, 12. 1906 թ. Ցարսկոէ Սելօ: Երկրորդ. «1905. թ. դեկտ. 11-ին տուած ուկազով, Մենք իրաւունք տուինք ազգաբնակութեան նոր լայն դասակարգերին մասնակցութիւն ունենալ Պետական Դումայում, որոշելով դրա հետ միասին այնպիսի կանոններ, որոնք կը թեթևացնէին այն ընտրողների լրացուցիչ ցուցակների շուտափոյթ կազմելը, որոնք իրաւունք են ստացել ուկազի համաձայն մասնակցել Դումայի ընտրութիւններին: Ծագած խառնակութիւնները և յուզմունքները պոստային կանոնաւոր հաղորդակցութիւնների ընդհատման հետ միասին, արգելք հանդիսացան, սակայն, մի քանի նահանգներում, որ այդ ցուցակները իր ժամանակին կազմուին: Ի նկատի ունենալով այս հանգամանքը, որպէս զի չուշանայ Պետական Դումայի գումարումը: Մենք յարմար գտանք և օգտաւէտ՝ փոխելու մեր որոշած այն կանոնը, որի համաձայն Դումայի անդամների ընտրութիւնները—բոլոր նահանգների և քաղաքների ընտրողական ժողովներում—պէտք է կատարուէր միևնոյն օրը և իրաւունք տալու կատարել այդ ընտրութիւնները զանազան ժամանակամիջոցներում—նայած համապատասխան յարմարութիւններին, և այդ առթիւ հրամայում ենք. փոխելով 1905 թ. սեպտեմբերի 18-ին բարձրագոյն հաստատուած կանոնների 34-րդ յօդուածը Պետական Դումայի ընտրութիւնների վերաբերմամբ: Ընտրութիւնները (3 և 5 յօդ.) կատարւում են բարձրագոյն ուկազներով նշանակուած օրերում, որ ներքին գործերի մինիստրը խնդրում է մինիստրների խորհրդի միջոցով: Կառավարիչական Սենատը չի յապաղի սրա կատարման համար տալ հարկաւոր հրամանը: Ստորագրուած է ՆԻԿՈԼԱՅ, 12 փետրվարի 1906 թ. Ցարսկոէ Սելօ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 փետրվարի: «Русск. Госуд.» լրագրի խօսքերի համաձայն, մինիստրների խորհուրդը յարմար համարեց նշանակել Դումայի հրաւիրելը ապրիլի 27-ին, որպէս զի հնարաւորութիւն տայ որ բացման ժամանակին շատ կարելւոյն մեծ թւով անդամներ հաւաքուին:

Մինչև այդ ժամանակ կարող են վերջանալ ընտրութիւնները ինչպէս եւրօպական Ռուսաստանի շատ նահանգներում և քաղաքներում, այնպէս և Լեհական թագաւորութեան մի քանի նահանգներում: Դումայի բացման ժամանակ ներկայ կը լինեն մօտաւորապէս աւելի քան 350 անդամներ, մի կազմ,—որ լրիւին կը բաւէ պարլամենտական կանոնաւոր ընթացքի համար:

ԲԵՌՆ, 13 փետրվարի: Դաշնակցական խորհուրդը, Շվէյցարիայի Պետերբուրգի դեսպանի նոր բացուած պաշտօնի համար, ընտրեց ազգային խորհրդի անդամ Էդուարդ Օդէին:

ԼՈՆԴՈՆ, 13 փետրվ.: Տօկիօից հաղորդում են «Դէյլի Տելեգրաֆին» կայսրի, պրինց Կօնաւսասկու և ամբողջ ազգաբնակութեան միստիֆիկացիայի ենթարկուելու մասին: Մի քանի անձինք, ներկայացնելով իրանց որպէս կենտրոնական աստղադիտարանի ներկայացուցիչներ, հեռագրել են ամենուրեք թէ՝ սպասւում է սարսափելի երկրաշարժ, որ կործանել է ամբողջ Տօկիօն: Այն համերգը, որին ներկայ էր պրինց Կօնաւսասկին, անմիջապէս վերջացաւ, պարլամենտի նիստը ընդհատուեց, պարլամենտի անդամները դուրս փախան փողոց: Ամբողջ քաղաքում պանիկա է. ժողովուրդը փախչում էր դէպի բաց տեղեր:—Ներկայ տարին զինելու են «Սատսումա» զրահանաւը 19000 տոննանոց «Կուրամա» և «Իկոմա» հածիչ նաւերը, «Մոգամի» և «Իօդօ» հանքատար նաւերը: Տիրում է յուզուած տրամադրութիւն Մանջուրիայի ապագայ վիճակի առթիւ ի նկատի ունենալով, որ ռուսները ուշացնում են դատարկումը: Մարկիզ Իտօն և կոմս Ինուէն ապրիլի ամսում ձեռնարկելու են երկարատև ճանապարհորդութեան Մանջուրիայում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 փետրվարի: «Торг. промышл. Газ.» լրագիրը հերքում է, իբրև բոլորովին սխալ «Ռուսաց Հեռագրական գործակալութեան» փոխառութեան մասին Պարիզի հեռագիրը:

Կ. ՊՈԼԻՍ, 13 փետրվարի: Լօնդոնի Թիւրքաց դեսպանին յայտարարուած է, որ Անգլիան համաձայնութիւն տուեց մաքսային հարկը երեք տոկոսով բարձրացնելուն:

ՍՈՒՄԻ, 13 փետրվարի: Գիւղացիական բանկը սկսեց իր գործունէութիւնը հողեր գնելու համար: Գիւղացիները համակրութեամբ են վերաբերւում: Առաջարկութիւններ առ այժմ սակաւ են. գները միջակ:

14 փետրվարի

ՄՕՍԿՎԱ, 13 փետրվարի: Երեկոյեան ժողովում քննւում էր ագրարային հարցի մանրամասնութիւնները: Խօմեակովի առաջարկութեամբ համագումարը վճռեց հողային հարցը համարել պետական առաջնակարգ կարևոր հարցերից մէկը, որի ժամանակը կախուած է ագրարային հարցի մանրամասնօրէն և լուրջ մշակումից տեղական կոմիտէտներում, ուր վճռուած է յանձնել համագումարի բոլոր վճիռները և նիւթերը: Շիպովի և Պլէվակօի ճառերից յետոյ համագումարը յայտարարուեց փակուած:

ԵԱԼՏԱ, 13 փետրվարի: Ընտրողների թիւը քաղաքում 4000 է, իսկ գաւառում՝ 14000:

ԵԼԱՏՄԱ, 13 փետրվարի: Բանտարկեալները անկարգութիւններ սարքեցին՝ կոտրելով երկու վառարան: Բանտարկեալների մեծ մասը բռնուած են քաղաքական յանցանքների համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 փետրվարի: Պուտիլովսկի գործարանի վերատեսչի օգնական երկրաչափ Նազարովը ենթարկուեց չարագործների յարձակման, որոնք 5 անգամ կրակ բանալով անյայտացան: Նազարովը շուտով մեռաւ: Փետրվ. 13-ին նշանակուած է Պետական Խորհրդի ընդհանուր ժողովը՝ քննելու համար մինիստրների խորհրդի՝ պարբերական մամուլի ժամանակաւոր կանոնները լրացնելու համար մշակած նախագիծը:

ՄՕՍԿՎԱ, 13 փետրվարի: Ընտրողական ժողովներին մասնակցելու համար լիազօրներ ընտրելու շրջանային ժողովները նշանակուած են փետրվ. 23-ին: Փոքր հողատէրերի նախապատրաստական նիստերը կը կայանան յետագայ շաբաթում. բանուորների լիազօրների ընտրութիւնները նշանակուած են փետրվ. 23-ին:

ՕԶԱԿՈՎ, 13 փետրվարի: Վերջանում է վկաների հարցաքննութիւնը. վաղը նշանակուած են վիճաբանութիւններ. վճիռը կը լինի երևի չորեքշաբթի օրը. ցուցմունքներ տալիս են նաւաստիները, որոնց ուղարկել են պատգամաւորները Շմիդտի մօտ, հրաւիրելով նրան մասնակցել միտինգին, որի մէջ Շմիդտը յորդորում էր նաւաստիներին հանգստանալ: Այս ցուցմունքից յետոյ Շմիդտը ճառ արտասանեց, որի մէջ բացադրեց իր քաղաքական հայեացքները:

ՍԱՐԱՏՕՎ, 13 փետրվարի: Նահանգապետի հրամանով շրջանային ժողովների լիազօրների ընտրութիւնները նշանակուած են փետրվարի 23-ին, մանր հողատէրերի ժողովները՝ մարտի 7-ին, բանուորների լիազօրների ընտրութիւնները՝ փետրվ. 28-ին:

ՀԵԼՍԻՆԳՖՈՐՍ, 13 փետրվարի: Աւազակները — [illegible] մի խումբ յարձակուեց պետական բանկի գրասենեակի վրա, սպանեց ծառային: Ընդդիմադրութիւն ցոյց տուող մի պաշտօնեայ վիրաւորուած է: Սպառնալով բանկի պաշտօնեաներին ատրճանակներով, կողոպտիչները գողացան 75,000 ռուբլի և անյայտացան: Կողոպտուած փողի 35,000 ր. պատկանում էր բանկի Ֆինլանդական ակցիոներական ընկերութեան: Չարագործները, ատրճանակներից անմիջապէս արձակելու սպառնալիքով, ստիպեցին ներկայ եղողներին բարձրացնել ձեռքերը, գողացան այդ գումարը լիազօր տիկնոջից, որ բերել էր փոխելու ֆինլանդական փողով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 փետրվարի: Պաշտօնական ընտրական ցուցակներ կազմելու աշխատանքների ընթացքի մասին: Փետր. 12-ից ստացած տեղեկութիւնների համաձայն, 50 նահանգներում և Դոնի Զօրքի Շրջանում հրատարակուած կամ նշանակուած են համաձայնութեամբ զանազան ժամանակներում, մինչև փետրվարի 22-ը, քաղաքային ընտրողների ընդամենը 410 ցուցակներ, գաւառական հողատէրերի 419 ցուցակներ և քաղաքներից ընտրողների 8 ցուցակ, որոնք ընտրում են Դումայի համար անդամներ նահանգներից՝ անկախ: Սրա հետ միասին՝ 22 նահանգների բոլոր ցուցակները կը հրատարակուեն փետրվ. 15-ին, 10 նահանգներինը՝ փետրվ. 12-ին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 փետրվարի: Վախճանուեց յայտնի երաժշտագէտ Արենսկին: Սկսեցին դասախօսութիւններ—պրոֆ. Լէսգաֆի նախկին կուրսերից կազմուած՝ առաջին բարձր ազատ ուսումնարանում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 փետրվարի: Սօլսկու նախագահութեամբ առանձին խորհրդակցութեամբ մշակուած է Ակմօլինսկի, Սեմիպալատինսկի, Ուրալի և Տուրգայսկի Պետական Դումայի ընտրութիւնների կանոնների նախագիծը: Մտադրւում է ընտրել օտար երկրացիների ամեն մի շրջանից մի ներկայացուցիչ, որի համար կազմել օտարերկրացի շրջաններից ընտրողների շրջանային խորհուրդներ: Օտար երկրացիներին կամ կազակներին չը պատկանող քաղաքացի հաստատաբնակ ազգաբնակութեան իրաւունք է տրւում ընտրել ամեն մի նահանգից մի ներկայացուցիչ: Շրջաններից անջատուած բնակիչները կարող են միանալ մօտակայ շրջանների հետ, որպէսզի կազմուին շինական առանձին ընտրողների բաժին, իւրաքանչիւրում 2000 բնակիչներից ոչ պակաս Ուրալի և Սիբիրի կազակներից ընտրւում են Դումայի համար մի անդամ: Դումայի անդամների ընդհանուր թիւը յիշեալ շրջաններից պիտի լինի 9-ը: Վերխնէուդինսկում զինուորական դաշտային դատարանը փետրվ. 10-ին դատեց երկաթուղային 30 ծառայողների, 4-ին դատապարտեց աքսորի, 9-ին մահուան պատժի: Գեներալ Ռէննենկամֆը մահուան պատիժը փոխարինեց աքսորով, 5-ին տուեց մահուան պատիժ: Տրոիցկօսավսկում, գիւղական պետերի համագումարի ամբողջ կազմը ձերբակալուած է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 փետրվարի: Արտիլերիական պահեստից գողացուած է 5 արձականի թնդանօթ առանց սայլակի, 14-փութից աւելի ծանրութեամբ:

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 14 փետրվարի: (Բիւրօյի թղթ.) Ներքին գործերի մինիստրը արգելեց «Ուվիլագ» լրագրի հատով վաճառումը:

ՎԱՐՇԱՎԱ, 14 փետրվարի: Կէս գիշերին արագ գնացքով Պետերբուրգ մեկնեց գեներալ-նահանգապետ Սկալոնը:

ՍԻՄՖԵՐՕՊՕԼ, 13 փետրվարի: Նահանգապետի հրամանով Պետական Դումայի նախապատրաստական ժողովների ընտրութիւնների ժամանակամիջոցը փետրվարի 26-ից—մարտի 10-ն է:

ՎԻԵՆՆԱ, 13 փետրվարի: Աւագների պալատը ընդունեց Իտալիայի Ռուսաստանի և Ունգարիայի կապած առևտրական դաշինքները: Ռուսաստանի հետ կապած դաշինքի վերաբերմամբ զեկուցանողն ասաց, որ ցանկալի է տարածել աւելի նպաստող երկրի սկզբունքը ռուսաց արևելա-ասիական իշխանութիւնների վրա, յիշեցնելով, որ դաշինքի պակասաւոր լինելը ապրանքների անմաքս անցնելուն դէպի Պարսկաստան՝ համաձայնութիւնների բացակայութեան հետևանք է:

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 14 փետրվարի (Ասօս Պրէս): Շանխայի գեներալ-հիւպատոսը հաղորդում է, որ երէկ Հօնգկօնգում սպանուած են 6 ֆրանսիացի եզուիտներ և երկու ամերիկացիներ: Չինական զօրքերը պահպանում են Կուտսան ապաւինած փախստականներին և միսիոնարներին, որտեղ ուղարկուած են ամերիկական թնդանօթաձիգ զօրքեր: Շանխայում ամեն ինչ հանգիստ է:

ԹԷՕԴՕՍԻԱ, 13 փետրվարի: Փետրվարի 12-ի գիշերը Ստարօկրիմսկու քաղաքային գանձարանից գողացուած է գանձատան արկղը: Այսօր կոտրած արկղը գտնուած է Կարագիօզ գիւղի մօտ. կորած են 1000 ր. և զանազան արժանագրութիւններ:

ԿԵՐՉ, 13 փետրվարի: Դատաստանական պալատի որոշմամբ դադարեցրած է մինչև վճիռը «Южный Курьеръ» լրագիրը, որի փոխարէն լոյս է տեսնելու «Южный Вѣстникъ» անունով մի օրաթերթ:

15 փետրվարի

ՊԱՐԻԶ, 14 փետրվարի: Պատգամաւորների պալատը քննեց զինուորական մինիստրութեան բիւջէտը: Վիճաբանութիւնների ժամանակ զինուորական մինիստրը պատասխանելով արած հարցին, ասաց, որ պատերազմի դէպքում պատգամաւորները և ծերակոյտի անդամները, որոնք պատկանում են պահեստի նաւատորմղին կամ երկրի զօրքին, կը միանան զօրքին մօբիլիզացիայի 8-ի օրը: Մինիստրն աւելացրեց, որ կառավարութիւնը ներկայումս զբաղուած է՝ քաղաքացիական կառավարութեան—զինուորական ժամանակում—կազմակերպման նախագծի մշակմամբ:

ԼՕՆԴՕՆ, 14 փետրվարի: Չինական յանձնաժողովի անդամները, որոնք ուղարկուած էին Եւրոպա և Ամերիկա՝ ծանօթանալու համար արևմտեան քաղաքակրթութեան հետ, հասան այստեղ հինգշաբթի օրը և գնում են Բերլին, իսկ այնտեղից Պետերբուրգ: Նրանց խօսքերին նայելով, ամերիկական ռէժիմը նրանց վրա նպաստաւոր տպաւորութիւն է գործել, բայց յարմար չի գայ Չինաստանին, որտեղ գոյութիւն ունի կայսերական իշխանութիւն: Չինացիները յայտնեցին, որ բրիտանական սահմանադրութեան հետ չեն ծանօթանայ: Դրանով կը զբաղուեն յանձնաժողովի միւս անդամները: Ի միջի այլոց նրանք յայտնեցին, որ չինական քաղաքականութիւնը այժմ ազատամիտ է: Չինաստանը հետևում է Եապօնիայի օրինակին, կախում ունենալով ամեն լաւագոյն հարաւից:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 փետրվարի: «Новое Время»-ի հաղորդած լուրը—որ գիւղացիական բանկի բաժանմունքներում մտադրւում է Պրուսիայի օրինակով մտցնել եկամտային հաստատութիւն, սխալ է: Գիւղացիական բանկը յաճախ իրան էր պահում զանազան կալուածքներ, և տալիս էր նրանց գիւղացիներին, բայց ինքնուրոյնաբար պետական տնտեսութիւն ստեղծելու մասին խօսք չը կայ:

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 14 փետրվարի: Չուխնինը յայտարարում է քաղաքը պաշարման դրութիւնից՝ զինուորական դրութեան մէջ մտցնելու մասին: Պաշարման ժամանակ արձակած հրամանները մնում են իրանց ոյժի մէջ: Չուխնինին մինչև լաւ կազդուրուելը փոխարինում է կոմենդանտ Մօլլերը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 փետրվարի: Լինևիչը հեռագրում է կայսրին փետրվ. 9-ին, որ Մուկդենի կռուից յետոյ պարզուեց, որ ռուսաց զօրքի հինգ վաշտերը կորցրել են իրանց դրօշակները: Ներկայումս, երբ արձակում են Եապօնիայի ռուս գերիներին, երևաց, որ օֆիցերները և նոյն իսկ միայն զինուորները առանց օֆիցերների մասնակցութեան աշխատում էին պաշտպանել դրօշակները: Դրօշակների ազատման գործին մասնակցող բոլոր օֆիցերները և զինուորները պարգև են ստանում, օֆիցերները—Վլադիմիրի չորրորդ աստիճանի շքանշանը սրով և բանտիկով, զինուորները—բարձր աստիճանի զինուորական նշանով:

ՀԵԼՍԻՆԳՖՈՐՍ, 14 փետրվարի: Երէկ Պետական բանկը կողոպտելու ժամանակ կողոպտիչները աղաղակեցին ռուսերէն. «Ռազմիկ կազմի անունով ձերբակալում ենք գանձարանը, ձեռքերը բարձր», փակելով բոլորին մութ նախասենեակում. չարագործները գողացան ռուս ֆինլանդական փողերը և տոկոսային թղթերը, 170,700 ր. արժողութեամբ: Ոստիկանութիւնը ձեռնամուխ է եղել եռանդուն կերպով չարագործների հետքերը գտնելու:

Կ. ՊՈԼԻՍ, 14 փետրվարի: Գլխաւոր տեսուչ Հիլմի փաշան վճռեց ռէգիմներ ուղարկել ալբանական [illegible] բռնկուած վայրերը: Ալբանացիները պահանջում են ներել Րիզա-բէյին:

ԻՐԿՈՒՏՍԿ, 14 փետրվարի: Մեկնեց Լինևիչը. փետրվարի 13-ին երեկոյեան Մեծ փողոցում գնդակով սպանուած է Իրկուտսկ-Միսովսկայա կայարանի կոմենդանտի օգնական բարօն Կորֆը:

ԲԻՅՍԿ, 14 փետրվարի: Վիտտէի ստորագրութեամբ հեռագրի մէջ կայսրը շնորհակալութիւն է յայտնում հոկտեմբերի 17-ի կուսակցութեան տեղական մասնաճիւղին՝ հեռագրով արտայայտուած ամենահպատակ զգացմունքների համար:

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ, 14 փետրվարի: Միչչենկոյի գալստեամբ խաղաղութիւնը վերականգնուեց: Նկատւում է սարսափելի թանգութիւն: Վերջին ժամանակներս նկատւում է շատ թւով եապօնացիների գալուստ և եապօնական ապրանքների ներմուծում: Երևան եկան եապօնական մանուֆակտուրայի նոր տեսակներ, որոնք Եապօնիայում նախքան պատերազմը չէին պատրաստւում, նոյնպէս և ռուսների պատրաստածի նման չորացրած ձկներ:

ԹԵՀՐԱՆ, 14 փետրվարի: Պարսկական մամուլը զգուշացնում է կառավարութեան անգլօ-ռուսական մերձեցումից, որի հետևանքը կը լինի Պարսկաստանի բաժանումը, խորհուրդ է տալիս մտցնել պետական րէֆօրմները անգլիական սահմանադրութեան նման, պետական գործերում հոգևորականութեան ընդարձակ չափով մասնակցութեամբ: Կովէյդի Շէյխ-Մուրա-բէկը հրաժարուեց անգլիացիների Պարսկական ծոցի շէյխերի համար մտցրած դրօշակից և բարձրացրեց կարմիր դրօշակ կիսալուսնով ի նշան համերաշխութեան Թիւրքիայի հետ:

ՊԵԿԻՆ, 14 փետրվարի: (Րէյտէր) Արտաքին գործերի մինիստրութեան անդամների ժողովում որոշուած է առաջարկութիւն անել Միացեալ Նահանգներին, ֆիլիպպացիների դէմ ուղարկուած զօրքի առթիւ և յայտնել թէ հիմք չկայ վախենալ օտարերկրացիների դէմ ծագած շարժումից, բօքսերների շարժումը չէ կարող կրկնուել, կառավարութիւնը կը ճնշէ տեղական կարգի խանգարումը: Ուրիշ պետութիւնների չինական ներկայացուցիչներին կը յանձնարարուի անել հարկաւոր առարկութիւնները:

ՎԻԵՆՆԱ, 14 փետրվարի: (Բիւրօյի թղթ.) Համաձայնութեան է եկած հիւսիսային երկաթուղու գնման հարցի առթիւ և ճանաչուած է պետութեան սեփականութիւն:

ՕԶԱԿՈՎ, 14 փետրվարի: Այսօր, ցուցմունքները քննելուց յետոյ, մեղադրողները տալիս են իրանց բացատրութիւնները: Շմիդտը խօսում էր մանրամասնօրէն ընդհատումից առաջ և յետոյ: Մեղադրեալի ճառը կը սկսուի վաղը, առաւօտեան ժամը 6-ին: Քաղաքում դրութիւնը յուզուած է:

ՄՕՍԿՎԱ, 14 փետրվարի: Մօսկվայի նահանգապետը դիմեց մի կոչով բանուորներին, որի մէջ հրաւիրում է հասկանալ տրուած իրաւունքին և բարոյական պատասխանատւութեան, ընտրել այնպիսի մաքուր մարդիկ, որոնք ցանկանում են խաղաղութիւն և կարգ մտցնել հայրենիքում, և ձգտում են վերջ դնել բանուորների վէճերին:

—Գիշերս երեք անյայտ անձինք Տրիբունսկան փողոցում յարձակուել են ոստիկանի վրա, որը հրաժարւում էր ցոյց տալ պրիստաւի բնակարանը: Ոստիկանը վիրաւորուած է: Յարձակուողները փախան:

ՎԱՐՇԱՎԱ, 14 փետրվարի: Զինուորական դատարանը մահուան դատապարտեց կախաղանի միջոցով, երեք բանուորների սպանութեան և զէմստվային պահակների կեանքի դէմ փորձ անելու համար:

ԱԼԺԵԶԻՐԱՍ, 14 փետրվարի: Ֆրանսիական պատգամաւորների—գերմանացիների մարոկկոյի ոստիկանութեան մասին արած վերջին հարցին տուած պատասխանագրութեան մէջ հերքւում է այն երկիւղը, որ երբ թէ ֆրանսիացիներից և սպանացիներից ոստիկանութեանը կազմելը վնաս կը պատճառէ բոլոր ազգերի ամենից ընդունուած հաւասարութեան՝ տնտեսական տեսակէտից: Այն դէպքում, եթէ կոնֆերենցիան անհրաժեշտ գտնի որոշել մեծ երաշխաւորութիւններ, այն ժամանակ ֆրանսիական պատգամաւորները չեն հրաժարուի այս մտքով կազմուած նախագծի ինքնուրոյն կերպով քննելուց: Այս պատասխանը հնարաւոր է դարձնում վերականգնել ոստիկանութեան հարցի բանակցութիւնները:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնուած 1880 թ.
(Տփխիս, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏԵՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզաւոր. հ.
Ց. Մ. ՉԻՔՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութեան:
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՄԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԷԶԷԼԻՆՈՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՆԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԴՈԿՏ.-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԵՆԲՐՈՒՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ց. ԳՈՒՐԳԷՆՈՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.
Ի. Գ. ԱՐԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: [illegible] (կօմնատներ) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նախասարդեան

ԷԼԷԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Գեդեւանօվի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը,
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը,
Կօրգանօվսկայա փող. № 20 Վերայում: Սեփական տ., տելէֆօն № 791: (ա. օ.) 66—150

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գոլովինսկի պրոսպեկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամամշևանի: Մուտքը Կադետսկի փողոցից № 2, (ա. օ.) 90—300

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկևիչյա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (Նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն):
(ա. օ.) 44—100

Լոյս տեսաւ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԽԱՅՑԵԱՆԻ
Միւռոնի դագաղում
Պատկեր Բագուի կոտորածից ր. հրատարակութեամբ նահատակների երկու նկարով:
ԳԻՆԸ 7 ԿՈՊ.
Դիմել՝ Թիֆլիս «Գուտտենբերգ» գրավաճառանոցը կամ հեղինակին: Հավլաբար, Լազարեվսկայա № 49:
Գումարով (առնուազն 100) գնողներին զեղչ 25—35%: Առանց կանխավճարի չը դիմել:
1—3

ՓՕՆԱՐՆԵՐ
Հրամայված տիպով տների համար. ընդունվում են պատուէրները հատը 2 րուբլի. Եղբ. Նիկիտիններին ցիրկի շէնքում Անդրէասի խանութում և նոյնպէս իր արհեստանոցում, Սապերնի փողոցում № 31. Կադեցկի կորպուսի յետևը:
1—2 (հ.ու.) Բէկ-Նազարեանց

Լոյս տեսաւ նոր գիրք
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի: Ձեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար. 77 երգ շարժական խաղերով. 112 օրինակներ աշխատանքի համար.—գինն է 3 ր. 10%—յատկացրած է հայ արկածեալների օգտին: Դիմել Թիֆլիս, Սօլօլակ, Պասկևիչի փողոց, № 13: (հ.կ.և.) 8—29

ԿԵՖԻՐ
Բժիշկներ Սօկոլետի, Գօտերսոնի, Շմիտի Բիլի և ուրիշ հետազօտութիւնից երևում է, որ կեֆիրը չափազանց նպաստում է կշռի աւելանալուն. կեֆիրը գործ է ածվում թոքերի հիւանդութեան, աղիքների կատառի, արեան պակասութեան, Չըջրուկի, (золотуха) դալկահարութեան, ուժասպառութեան ժամանակ և առհասարակ լաւ ներգործութիւն է ունենում ջղերը հանգստացնելու վրա: Կարելի է ձեռք բերել Օ. Կորօնայի գործարանում, Լորիս-Մելիքեանի փող. սեմինարիայի դիմաց: Ցանկացողներին կարելի է ուղարկել իրանց բնակարանը: (հ.կ.) 2—10

ԼԷՕ
Ս. ՄԵՍՐՈՊ
(Հայ տառերի գիւտի 1500-ամեակի առիթով)
336 երես, գինը 75 կոպ.:
Դիմել՝ «Գուտտէմբէրգ» գրախանութը, Թիֆլիս. Նոյն տեղից կարելի է ձեռք բերել ամեն տեսակ դասական և ընթերցանութեան գրքեր: 10—15

Լոյս տեսաւ Աղբիւրի յունվարի համարը և ուղարկվեց բացառապէս նրանց, որոնք վերանորոգել են իրանց բաժանորդագրութիւնը և անցեալ տարվայ միայն Աղբիւր ստացողներին:
«ԱՂԲԻՒՐ»-ի առանձին համարը՝ 40 կոպէկ
Բովանդակութիւն № 1
Մայրական կաթը, Յ. Թումանեանի, Մանուկն օրօրոցում (պատ.): Նորածին Յիսուսը իր ծնողների և հրեշտակ մանուկների հետ. (պատ.): Բարի շունը և փոքրիկ որբ աղջ. Լևոն Վարդանի. Ս. Էջմիածին, Գէորգեան Ճեմարան, Գէորգ դ. (պատկերներ), Մեր ազգային եկեղեցական կալուածքները. Բենիկ վարդապետ, Վերածնութիւն, Կ. Մելիք-Շահնազարեանի, Հողի գանգատը (պատկերներով). Ղազ. Աղայեանի. Կաղանդ (ոտանաւոր), Մէյրի, Մայրիկի համար, Զարուհի, Բախտի շանգը նոր տարվայ նախօրեկին. Սօվանիկեայի. Գուրգէնը լճի ափին (պատկեր), Հայոց Հայրիկը (ոտանաւոր). Յար. Պետրոսեանի, Վեհափառ Հայրիկ (պատկեր). Բենիկ վարդապետ, Հայրիկեան թանգարան. Փոքր տօրակը. Բամբանեանց Ս. Կ. Մելիք-Շահնազարեան (կենսագրական պատկերով), Պատրիկ. Մրրիկ (ոտանաւոր). Հասօյի:
Այլ եւ այլք. Որքան աստղ կայ երկնքում. Անգլիացին և չինացին. Կիրակնօրեայ հանգիստ սպասաւորների համար. Մրջիւնների այգիները:
Զուարճալիք: Թւաբանական խնդիր: Շուտասելուկ: Մի առաջարկ:
Սուրհանդակ: Նամակներ՝ Զարէհից, Միրանուշից, Արուսեակից:
Շարունակվում է ներկայ 1906 թ. բաժանորդագրութիւնը «ԱՂԲԻՒՐԻ» և «ՏԱՐԱԶԻ»:
Հասցէն՝ Тифлисъ, редакція Агбюръ կամ Таразъ. 1—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Թուրքական գերութիւնից ազատված մի գերձակ (Կովկասեան հագուստ) և իր կինը որոնում են աշխատանք: Գործ տալ ցանկացողները կարող են դիմել՝ Գուդովիչի փողոց, տուն Կորգանովի հարցնել Յովսէփ Եղիազարեանցին: 1—1

ОТКРЫТА ПОДПИСКА
На большую ежедневную, съ полной программой общественно-литературную и политическую газету
БАКУ
(четвертый годъ изданія).
Газета имѣетъ собственныхъ корреспондентовъ въ крупныхъ городахъ Кавказскаго края, а также въ Петербургѣ, Москвѣ и за границей.
Подписная цѣна: для городскихъ подписчиковъ на годъ 7 руб., на 6 мѣс 4 руб., на 3 мѣс. 2 р. 50 к., на 1 мѣс. 1 р. для иногороднихъ подписчиковъ: на годъ 8 р. 50 к. на 6 мѣс. 5 р.. на 3 мѣс. 3 руб., на 1 мѣс. 1 руб. 50 коп.
Для годовыхъ подписчиковъ допускается разсрочка: Для городскихъ при подпискѣ 3 руб., къ 1 апрѣля 2 р., къ 1 іюня 2 р. Для иногороднихъ: при подпискѣ 3 р. 50 к., къ 1 апрѣля 3 р., къ 1 іюля 2 р.
Редакторъ В. А. Арутчевъ.
2—3

Փետրվարի 5-ից հրատարակվում է
„**ԴԻՏԱԿ**“
Ժողովրդական շաբաթաթերթը
Բաժանորդագինը՝ տարեկան 2 ր. վեց ամիսը 1 ր. երեք ամիսը 50 կ., արտասահման՝ 3 ր. 1½ դոլ. և կամ 8 ֆր.: Մինչև ապրիլի 1-ը 2 ր. վճարողը կը ստանայ ձրիաբար «Բառարան հայ կենսագրութեանց» գիրքը:
Հասցէն՝ Тифлисъ. ред. «Дитакъ» կամ Tiflis (Caucase) red. «Ditak».
Խմբ.-հրատ.՝ Հայկ Տէր-Աստուածատրեանց
(հ. կ.) 2—2

Правленіе Кавказскаго Общества исправительныхъ земледѣльческо-ремесленныхъ колоній и пріютовъ проситъ г.г. Членовъ Общества пожаловать въ помѣщеніе Тифлисской Судебной Палаты въ воскресенье 26 февраля сего 1906 года, въ 1 часъ дня, для участія въ обыкновенномъ Общемъ Собраніи членовъ Общества.

ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:
1. Отчетъ о дѣятельности Правленія за 1905 годъ.
2. Денежный Отчетъ Общества за 1905 годъ.
3. Приходорасходная смѣта Общества на 1906 годъ.
4. Докладъ ревизіонной комиссіи по отчету за 1905 годъ и по смѣтѣ на 1906 годъ.
5. Вопросъ объ избраніи 4-хъ членовъ Правленія, кандидатовъ и Ревизіонной комиссіи на 1906 годъ.
6. Представленіе Правленія Общества объ утвержденіи въ должности директора колоніи.

Примѣчаніе. Общее Собраніе считается состоявшимся при участіи въ немъ не менѣе 20 членовъ (§ 17 устава Общ.)
2—3

ԱՄԵՆԱՏԱՐԱԾՎԱԾ
ՍԱՊՈՆԸ
ԳԼԻՑԵՐԻՆԻ ՍԱՊՈՆՆ,
որ ունի իր հետ [illegible] գործածութեան համար ռուսական նորագոյն նկարներ:
ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
(15) 6—12

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15.